

891715

U-53

ԱՏ. Գ. ՄԻՐԶՈՅՆԱՆԻ ԵՒ Ս. ԼԻՍԻՅՆԱՆՅԻ № 3

Ե. ՄԻՍՈՆՎԱ

(ժողովրդական փոփոխած)

ԱՐԻՈՒԹԵԱՆ ԹԵԻԵՐԸ

1652

Թ ա Ր Գ մ ա ն ե ց

ՅԱՐՈՒԻՔՆ ԹՈՒՄԱՆՆԱՆՑ

44



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Типография Груз. Издат. Т—ва. I Сакарან վրայ Հրատ. Ընկ.

1893



2003

5609

Իր ամբողջին սկիզբն Նույն Բաղամբարի յեռասակին ներ
ՀԱՅՐԱՊԵՏ ԲԱՆԱՆԹԱՐԻՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ՄԻՐՉՈՅՆԱՆԻ ԵՒ Ս. ԼԻՍԻՅՆԱՆԻ

3545

891.71-9

U-53

es

Ե. ՍԻՍՈՆԵՎԱ

(Ժողովրդական փոխօրհան)

ԱՐԻՈՒԹԵԱՆ ԹԵԻԵՐԸ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

1002
891
6938

7

ԱՐՏԱՏՊՈՒՄԻՆ „ԱՂԲԻՐ“ ԱՄՍԱԳՐԻՑ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Типография Груз. Издат. Т—ва. | Сахарань վրաց. Հրատ. Ընկ.
1893



ԱՐԻՈՒԹԵԱՆ ԹԵԻՆՐԸ

I.

Օժ գետի հովտում, ներքին Նորմանդիայում, ծովից երեք մղոն հեռու, ապրում էին երկու ամուսիններ. նրանք բարի և առաքինի ֆրանսիացի գիւղացիք էին: Այդ երկու ամուսիններն իրանց ճակատի քրտինքով ձեռք էին բերել բաւականի լաւ կարողութիւն: Հարիւր տարի սրանից առաջ Օժի հովիտը շատ վատ էր մշակուած: Նա ներկայացնում էր համարեա մի երկար կանաչ անապատ իր անհամար խնձորենիներով. ուր որ նայէիր, ամեն տեղ մարգագետիններ էին երևում, երբեմն ընկուզենու փոքրիկ անտառի կամ պարտիզի ստուերի տակ երևում էին փայտէ տնակ կամ խուղ. այնտեղ քարը հազուագիւտ է: Ի՞նչ հոյակապ կովեր ունէին գիւղացիք, ի՞նչ անուշիւղ էին ստանում, իսկ պտնիւրը մինչև անգամ նրանց մօտ մեծ հռչակ էր ստացել: Բայց որովհետև այն ժամանակ դեռ չըկային ոչ մեծ ճանապարհներ և ոչ երկաթուղիներ, իսկ հարուստ ամառանոցներ, որ այժմ պատել են ամբողջ ծովի ափը, ոչ ոք չէր շինում, ուրեմն հասկանալի է, որ գիւղացիք էլ չէին մտածել իրանց երկրի բարւոքման մասին:

Այն գիւղացին, որի մասին ձեզ պատմում եմ, ունէր «Դուսէ» (մեղմ, հանդարտ) մականունը, իսկ նրա կնոջ կոչում էին «քոյրիկ-Դուսէտ»: Աստուած սրանց անզաւակ չըթողեց. սրանք ունէին շատ որդիք, որոնք իրանց ծնողաց պէս բարի, հանգիստ և աշխատասէր էին. նրանք գիշեր-ցերեկ առանց շտապելու աշխատում էին, ոչ մի ժամանակ ձեռքե-

Дозволено цензурою. Тифлисъ, 10 марта 1893 года.

ըը ծալած չէին նստում տանը պարապ-սարապ, նրանցից իւրաքանչիւրը աշխատում էր մի փոքր փող ձեռք բերել, որ ժամանակով գնի իր համար մի կտոր հող:

Բայց Գուսէն և Գուսէտը ունէին Կաղլիկ մականունով և մի ուրիշ տղայ, որն ամենեւին չէր աշխատում: Նա ոչ թույլ կազմուածքի տէր էր, ոչ էլ հիւանդոտ, այլ ընդհակառակը, թէպէտ կաղ էր ծնունդով, բայց փափկիկ երես ունէր և շատ կարմրաթշիկ էր:

Անհնազանդ կամ ծուլ չէր էլ կարելի նրան անուանել, որովհետեւ նա գործից չէր վախենում. բայց նրա գլխում մի միտք էր ծագել—գառնալ նաւաստի: Իսկապէս Կաղլիկը չէր հասկանում «նաւաստի» բառի բուն նշանակութիւնը. և ինչպէս կը հասկանայ նրա պէս մի տասը տարեկան երեխան. բայց չընայելով նրա այդ հասակին, այդ միտքը նստել էր նրա գլխում:

Բայց առանց պատճառի չէր ծագել նրա գլխում այդ որ իր մանկութիւնից ի վեր ճանապարհորդում էր աշխարհիս շուրջը վաճառականական նաւով. նա վերջին ժամանակներում զաղթեց նրանց գիւղի մօտ գտնուած Տրուվել աւանը, որտեղից շուտ-շուտ հիւր էր գալիս «Գուսէտների» մօտ և երկար ու բարակ պատմում էր երեխաներին ճանապարհորդութեան ժամանակ իր գլխին եկած անցքերը: Քեռու պատմածները տանում էին Կաղլիկի ուշքն ու միտքը. նա թէպէտ չըգիտէր թէ ինչ բան է ծովը, բայց գիշեր-ցերեկ նրա վրայ էր մտածում:

Ծովը նրանցից այնքան էլ հեռու չէր. ընդամենը երեք մղոն տարածութիւն կար, որը Կաղլիկի համար դատարկ բան էր—նա ման գալը սիրում էր. բայց ցաւն այն էր, որ նրա հօրը շատ էլ դիւր չէր գալիս որդու ճանապարհորդելու իղձը, բացի դրանից այդ կողմի գիւղացիները սովորութիւն չ'ունէին առանց կարիքի թողնել գիւղը:

Կաղլիկի մեծ եղբայրները, երբ նրանց վարձում էին հարեւանները՝ շուտ-շուտ գնում էին զանազան տօնավաճառներ, տանելով իրանց հետ ընդեղէններ, ծախելու թռչուններ, այդպիսի գէպքերում փոքրերն ամբողջ օրը արածացնում էին

կովերին, իսկ երեկոյեան բերում տուն. այսպիսով Կաղլիկին երբէք չէր յաջողում ազատ զբօսնել: Այդ բանը նրան շատ տաղտկացնում էր և նա սաստիկ տխրում էր:

Կովեր արածացնելիս Կաղլիկը երբէք չէր զբաղւում ոչ մի գործով—ոչ կողովներ էր հիւսում եղեգնից, ինչպէս իր փոքրիկ ընկերները, ոչ տնակ էր շինում հողից ու տաշեղներից. այլ բոլոր ժամանակ նստած կամ պառկած պլգում էր իր աչքերը ամպերի վրայ կամ նայում էր չուող թռչուններին, որոնք թռչում էին հեռու, ծովի մօտ, կամ այնտեղից—մի այլ տեղ:

«Երջանիկ թռչուններ, —մտածում էր Կաղլիկը,—նրանք ունեն թևեր, նրանք կարող են թռչել այնտեղ, ուր իրանց սիրտն ուզում է, նրանք այնքան տեսակ-տեսակ տեղեր են տեսնում, որ երբէք չեն տխրում»:

Միշտ հետամուտ լինելով չուող թռչունների կեանքին, նա վերջ ի վերջոյ ուսումնասիրեց բոլոր մանրամասնութեամբ նրանց վարքը, բարքը և սովորութիւնները: Նա բնականից մի փոքր վախկոտ լինելով, տնից այնքան էլ հեռու չէր գնում. այդ պատճառով էլ նրա հետաքրքրութիւնը շարժող առարկաները միայն թռչուններն էին: Մի անգամ նրանց դարձեալ հիւր եկաւ նրա քեռին. Կաղլիկը այլևս չը կարոցաւ համբերել և կալաւ քեռու ետիցը, որ նա տանի նրան իր հետ և ճանապարհորդի միասին աշխարհիս շուրջը:

—Ո՞ր, ինչ քո խելքի բան է,—բացականչեց հայրը ծիծաղելով.—Քո չօլախ ոտով ու վախկոտ սրտով ծովը պիտի դուրս գաս:

—Ե՛, լաւ, դարձաւ Կաղլիկը քեռուն,—բան չ'ունեմ, որ ընկել ես այդ վախկոտի հետ: Պա անցեալ տարի մինչև անգամ, տեսնելով մրոտ, սեացած ծխնելոյզ մաքրողին, նորան սատանայի տեղ ընդունեց և այնպէս վախեցաւ, որ քիչ էր մնում մկան ծակը մտնէր. իսկ սապատող գեթակից, որը միշտ մեր ընտանիքի շորերը կարում է, այնպէս վախենում է, որ, իմ արևը վկայ է, նրան տեսնելուն պէս՝ իսկոյն սարսափած գոռում է: Հէնց որ շուշը սռնում է, կամ կովը նրա վրայ մի փոքր խեթ նա-

յում է և կամ թէ ծառից խնձորն ընկնում է գետնին—տղաս խկոյն վախից ծլկում է: ձիշտն աստժ, դա ծնունդ օրից վախկոտութեան թւեր ունի իր մէջքին:

—Այդ բոլորը կանցնի, բոլորը կանցնի,—պատասխանեց քեռի Լակալը,—ամեն մարդ մանուկ հասակում վախկոտութեան թւեր է ունենում իր մէջքին, բայց վերջը ուրիշ թւեր էլ են բսնում:

Լակալի խօսքերը շատ զարմացրին Կաղլիկին:

—Ես ոչ մէկ թւ չ'ունիմ,—ասաց նա.—հայրս ծիծաղում է ինձ վրայ, հա, երբ դուրս գամ ծովը՝ այն ժամանակ թւեր կը բսնեն իմ վրայ, այդ չը գիտեմ:

—Պու քեռուդ հարցրո՛ւ, տես՝ նա թւեր ունի՞ թէ չէ.—կատակելով նկատեց հայրը,—տես թէ ունի, թող քեզ ցոյց տայ:

—Ի հարկէ ունեմ,—համեստութեամբ պատասխանեց Լակալը,—բայց իմ թւերն արիութեան թւեր են, որոնցով ես թուչում եմ վտանգների դէմ յանդիման:

Այդ խօսքերը խորը թափանցեցին Կաղլիկի սրտի մէջ:

Նրա ծովի վրայ մանգալու ցանկութիւնը շատ էր բարկացնում հօրը, որն անդադար կրկնում էր, որ այդ նրա խելքի բան չէ, իսկ լուռ և հանգիստ մայրը չէր համարձակուում հակառակել իրմարդուն: Այդպիսով ծնողները վրձնեցին տալ Կաղլիկին դերձակութիւն սովորելու, որովհետեւ նա ոչ չ'ունէր հող մշակելու, նա մանաւանդ որ դերձակութիւնը նրանց գիւղում օգտաւէտ մի գործ էր:

Ահա մի անգամ, երբ սապատող դերձակը եկաւ «Պուսէտների» մօտ, հայրը հիւրասիրեց նրան և ասաց.

—Լսիր, ձախլիկ-բարեկամ, (դերձակը այս մականունը ունէր, որովհետեւ նա կարում և բանում էր ձախ ձեռքով) այս տարի կարելու ոչինչ չ'ունենք քեզ տալու: Արի, սիրելիս, իմ փոքր որդուն աշակերտ ընդունիր: Առաջին տարուայ համար, կարելի է վարձատրութիւն տամ քեզ սովորացնելու համար, իսկ եկող տարի քեզ նա կը հարկաւորուի մանր-մուշկ գործերի համար:

—Իսկ թնչքան կը տաս մօտաւորապէս,—հարցրեց դերձակը, խէթ-խէթ նայելով խեղճ Կաղլիկի վրայ, որը կանգնած էր նրա առաջ ոչ կենդանի, ոչ էլ մեռած:

Սապատող դերձակը կը լինէր մօտ լիսուն տարեկան. նրա ահագին ճաղատ գլուխը վարունգի էր նմանում. նրա երկու աչքն էլ ծուռ էին, երկու ոտն էլ կաղ, այնպէս որ մանգալու ժամանակ անդադար թեքւում էր այս ու այն կողմ, կարծես զսպանակի վրայ ամրացրած տիկին լինէր: Չը նայելով իր ծուռ ոտներին, նա սաստիկ արագ էր վազում, իսկ կարելու ժամանակ նրա երկար ու ոսկրոտ ձեռքերն այնպիսի արագութեամբ էին գործում, որ անհնար էր հետևել ասեղին. աւելացրէք դրան նրա մէջքի ահագին սապատը և նրա փայլուն ու կատաղի աչքերը, և այն ժամանակ դուք կը հասկանաք՝ թէ ինչպէս էր վախենում երկչոտ երեխան իր սպառազ տիրոջից: Այդ առաւօտեան «ձախլիկը» մի կատարեալ հրէշ էր թւում Կաղլիկին և եթէ հայրը չը յանդիմանէր որդուն՝ թէ նա ծնուել է վախկոտութեան թւերը մէջքին, նա անպատճառ խկոյն կը փախէր այնասեղից:

Եւ ահա հայրը և «ձախլիկը» պայման կապեցին իրար մէջ և մի-մի բաժակ հին գինի խմեցին. յետոյ հայրը խկոյն հրամայեց իր կնոջը պատրաստել Կաղլիկի իրերը, որովհետեւ դերձակը համաձայն էր աշակերտ ընդունել նրա որդուն, պահանջելով երեք տարուայ համար 18 էկիւ *):

Միայն այժմ հասկացաւ խեղճ երեխան, որ պայմանը արդէն կապուած է: Չաղլիկը չէր համարձակուիլ հակառակել հօրը, բայց երբ մայրը լալով շրջուեցաւ դէպի տան կողմը, որ դուրս գայ սենեակից, նա յուսահատուած ընկաւ նրա յետևից և արտասուքից խեղդուելով բացականչեց. «Մայրիկ, մայրիկ, մի թողնիր, որ ինձ տանեն»:

Բայց այդ րոպէին «ձախլիկը» մեկնեց իր սարդի թաթերի նման երկայն ձեռները և բռնեց երեխային ճանճի պէս: Մի ակնթարթում գցեց նրան իր սապատի վրայ և երկու կռներով՝ բռնելով նրա ոտները, սղմեց նրանց կրծքին:

*) Մի էկիւն արժէր 1 ու. 50 կ.: Այդ ֆրանսիական հին դրամ էր:

—Լաւ, լաւ,—գոչեց նա, վեր կենալով իր տեղից,—
թող մայրը ամեն բան պատրաստի իր կարգին, իսկ մենք
առ այժմ կը գնանք։ Գիտեմ, մայրը ամբողջ մի ժամ հազիւ
կը պատրաստի իր որդու չուլ ու փալասը։ Բոլորը կ'ուղարկէք
ուղղակի Դիվի *),—գարձաւ նա հօրը,—ես երեք օր
այնտեղ կը լինեմ։ Ե՛յ պստիկ,—աւելացրեց նա, դիմելով
Կաղլիկին,—խելօք նստիր և մի ոռնալ, թէ չէ իմ երկար
մկրատով լեզուդ կը կտրեմ։

—Դու դրան այնքան էլ մի հուփ տալ,—նկատեց հայ-
րը,—դա բարի և հնազանդ երեխայ է։

—Շատ բարի, շատ բարի,—պատասխանեց դերձակը,—
դուք սրա մասին միք մտածիլ, այդ իմ գործն է։ Ես ազիզ
պահածի հետ բան չունեմ, թէ չէ՝ մէկ էլ տեսաք, դուրս
արեցի։

—Դէ թող մէկ համբուրեմ դրան,—ասաց զգացուած
հայրը,—չէ՞ որ երկար ժամանակ չենք տեսներու։

—Կը տեսնէք, ինչ ես ասում. մենք միասին գալու
ենք ձեզ մօտ բանելու։ Սո՛ւս կաց, թէ չէ կը վերցնեմ, իմ
արևը վկայ է, ու ներքև կը շարտեմ. Աստծուն է յայտնի,
թէ դուք ինչ էք տալիս սրան սովորեցնելու վարձ—այդ փո-
ղով ապրուստ չի լինի։


Այս ասելով, «ձախլիկը» շտապ-շտապ դուրս գնաց և
սկսեց վազել խնձորենիների ուղիով և փոշու թանձր ամպեր
բարձրացնել իր կաղ ոտներով։ Սարսափած երեխան կամենում
էր գոչել, բայց երկիւղից լեզուն կապուեցաւ և ատամները
սկսեցին իրար զարնուել։

Նա գլուխը շրջեց դէպի տան կողմը և տեսներով, որ
մայրը դռան շէմքին կանգնած պարզում է դէպի նրան իր
ձեռները, արտասուքից խեղդուեցաւ։

«Մայրիկ», բացականչեց նա յուզուած. և մայրը բոլո-
րովին գունատուած, ուշքից գնաց և ընկաւ իր մեծ որդու,
Փրանսուայի կռների վրայ, որը բարկացած ու զգուած սըր-
տով հեռուից սպառնում էր սապատող-դերձակին իր բռունցք-

*) Դիվի փոքրիկ նաւահանգիստ է Փրանսիայում, Լամանչ
ջրանցքի վրայ։

ներով։ Իսկ նրա համար այդ բոլորն երազ էր. նա իր չարա-
գուշակ ծիծաղով, ինչպէս մի կախարդ, տանում էր խեղճ
Կաղլիկին, տանում էր իր հայրական տնից հեռու, հեռու։
Երեխան, տեսներով որ մայրը վայր է ընկնում, կարծեց թէ
թէ նա մեռել է. նրա սրտի բաբախումը իսկոյն ընդհատուեց,
գլուխը թեքուեց դերձակի դուրս ցցուած ուսի վրայ և ուշ-



քից գնաց։ Երբ սթափուեցաւ, նա միանգամից չը կարողա-
ցաւ իմանալ թէ որտեղ է գտնուում. նա տեսաւ, որ ինքը
պառկած է աւազի վրայ, շրջապատուած եղեգներով, վայրի
խոտերով և մացառներով։ Մի փոքր վեր բարձրանալով, նա
տեսաւ պառկած դերձակին, որը բարձր ձայնով խռմփացնում
էր։ Կաղլիկը մօտեցաւ նրան—նայում է և ո՛վ հրաշք. սա
պատողը քնած է միայն մի աչքով, իսկ միւսը բոլորովին
բաց է։ Կաղլիկը վախվխելով ձեռքը կամաց մօտեցրեց քնածի
աչքին—բաց աչքը չէր ճպում։ Բանն այն էր, որ դերձակը
արդէն վաղուցուանից ոչինչ չէր տեսնում այդ աչքով և այդ
պատճառով էլ նրա կոպը չէր ծածկուում քնած ժամանակ։
Երեխան ստուգելով, որ դերձակը քնած է և չի կարող նրան

բռնել, հանեց իր փայտէ ոտնամանները և բոբիկ ոտներով կուզէկուզ այնտեղից հեռացաւ զգուշութեամբ և այնուհետեւ սկսեց բոլոր ուժով ծլկել նապաստակի նման, որ ազատուի սարսափելի սապատողից: Նա սաստիկ յոգնել էր. կանգ առաւ և նայելով իր շուրջը նկատեց մի խիտ մացառ, մտաւ նրա տակ, պառկեց երկար խոտերի մէջ և տապկացաւ:

Չ'անցաւ մի ժամ, սապատող դերձակը զարթնեց քնից: Տեսնելով Կաղլիկի փայտէ ոտնամանները, նա իսկոյն հասկացաւ, որ զոհը դուրս է փախել իր ճանկերից, և թունալից ժպիտը երեսին ասաց.

—Այ, քեզ լիմար երեսայ. ես հետքերից գիտեմ, որ նա փախել է Դիվի, իսկ ինքը, երևի, կարծել է թէ տուէն կը փախչի: Ես նրա «օխտիցը» իսկոյն կը գամ և ցոյց կը տամ նրան թէ ինչ է նշանակում փախչելը:

Սապատող դերձակը գտաւ իր էշը, որը նոյնպէս այլանդակ էր, ինչպէս իր տէրը, և որն արածում էր մօտակայ թփերի մէջ, խփեց նրան երկար դադանակով և դիմեց դէպի քաղաքը, բզելով էշին և ջրաղացի թւերի պէս շարժելով իր անճոռնի կռները:

II

Որը մթնել էր արդէն, երբ Կաղլիկը վճռեց դուրս գալ իր փախստատեղից: Գարնանային երեկոն սովորականից հանդարտ ու տաք էր. հեռուից հասնում էին նրա ականջին ինչոր տարօրինակ ձայներ. նա երկիւղից այնպէս էր կարծում, թէ այդ զարհուրելի դերձակի փայտէ ոտնամանների թրըխթրըխկոցն է, բայց որքան երեխան առաջ էր գնում, այնքան պարզ ու որոշ էին դառնում այդ ձայները. վերջը նա իմացաւ, որ այդ ջրի վշտոցն էր: Մի փոքր առաջ գնալով, նա տեսաւ ծովը, որ ծածկուած է եղել մի քանի կարգ պատնէշներով: Քաղցից ու յոգնածութիւնից երեխան ընկաւ մի տեսակ ինքնամոռացութեան մէջ: Նրան այնպէս էր թւում, որ իբրեւ իրան մէջքին թւեր են բսնում, բարձրանում է օդի մէջ և կամաց թռչում է պատնէշների, մամռապատ աւազի կոյտերի վրայով: Հեռու

սեին էր տալիս ծովը. մէկը միւսից բարձր հսկայական ժայռերը պատել էին նրա ամբողջ Կաղլիկը այնպէս էր զգում թէ թռչում է մի որևիցէ տեղ, սառը և աղի ջուրը սրսկւում է նրա մերկ ոտներին. նրան այնպէս էր թւում, թէ նա անդադար թռչում է ու թռչում, և ինչ որ բարակ, փոքրիկ զանգակի նման ձայներ կանչում են նրան. վերջապէս նա դուրս եկաւ մի փոքրիկ ժայռի հրապարակ: Այդ ժայռի կատարին մի փոս կար, որը ծածկուած էր կակուղ մամռով: Երեխան ծալեց իր թւերը և այդտեղ պառկեց որ քնի: Քնած ժամանակ նա լսում էր, թէ ինչպէս ալիքները շառաչում են քով զարնում էին ժեռոտ ավերին և թէ ինչպէս փոքր առ փոքր բարձրանում էր ծովը. նրա ականջին դարձեալ հասան ինչ որ ձայներ, որ ոչ օդի միջից էին և ոչ էլ ծովի ալիքների միջից: Նրան այնպէս էր թւում, թէ ինչ որ մէկը վերելք թռչում է և կամաց կայցնում թւերն իր երեսին: Բայց լուսաբացին հանգստացրեց երեխային խորը քունը:

Երբ նա զարթնեց, կարմիր արևը դեռ նոր էր բարձրանում արծաթի պէս մառախուղի տակից, որը գրկել էր ամբողջ ծովը: Կաղլիկը իսկոյն ոտքի կանգնեց և հիացած նայեց իր շուրջը: Նրա առաջ փայլում ու ալեկոծւում էր կանաչագոյն ծովը, բայց տեղատուութեան պատճառով ջուրը ժայռից հեռացել էր բաւականի տարածութեամբ, այնպէս որ նա, ցած իջնելով, այժմ կարողանում էր ազատ անց ու դարձ անել ծովի անջուր յատակի խոնաւ աւազի վրայ և ալիքների դուրս ձգած խխուէնջները ժողովել, որոնցով նա նախաճաշիկ արեց:

—Ա՛, ուրեմն այս է ծովը.—մտածում էր երեխան, հետաքրքրութեամբ զննելով ամեն բան, ինչ որ ընկնում էր աչքին: Նա հեռու տեսնում էր նաւեր, մակոյկներ, մինչև անգամ տեսաւ մարդիկ և առագաստներ, որոնք փքւում, ուռչում էին քամուց: Հորիզոնի վրայ իրան երևաց մի ինչ որ շարժուող շինութիւն, որն աւելի արագաշարժ էր քան թէ մակոյկները: Այդ առագաստաւոր նաւ էր: Երեխայի սիրտը սկսեց բաբախել. «Երևի, այդ առագաստաւոր նաւ է, ասում էր նա ինքն իրան:—Քեռիս, երևի, այդպիսի առագաստաւոր նաւերով է ճանապարհորդերը»:

Այդ չրտեսնուած բաները երեխային մոռացնել տուին սարսափելի դերձակին. յանկարծ աւագոտ ավերից լսուեցան մարդու ոտքի ձայներ: Յետ նայելով, նա տեսաւ, որ մի մարդ արագ քայլերով դիմում է դէպի նրան: Երեխայի սիրտը ճաքեց երկիւղից. բայց երբ նա մի փոքր մօտեցաւ և Կաղլիկը նկատեց, որ իր եղբայր Փրանսուան էր, որը անցեալ օրը բռնուցքներով սպառնում էր սապատողին, ուրախութիւնից վեր-վեր թռաւ և առաջ վազեց: Փրանսուան ատելով ատում էր դերձակին և գիտէր որ իր փոքր եղբայրը վախկոտ տղայ է:

— Ո՞րտեղից. — բացականչեց մեծ եղբայրը, սիրով համբուրելով երեխային: — Հիմա առաւօտեան եօթ ժամն է: Մի՞թէ արդէն եղել ես Դիվում: Ո՞րտեղ ես գիշերել:

— Ա՛յ, այստեղ, «Սև ժայռի» վրայ, — ասաց Կաղլիկը:

— Ի՞նչպէս, «Մեծ կովի» վրայ, — հարցրեց եղբայրը:

— Ոչ, Փրանսուան, այդ կով չէ, այլ ժայռ է:

— Յիմար, դու լիմար. չէ՞ որ այդ բոլոր ժայռերը կոչւում են «Սև կովեր». ծովը մականթացութեան ժամանակ մինչև նրանց ստորոտն է հասնում: Ո՞րտեղ էիր նստած, ներքև, թէ վերև:

— Չը գիտեմ որտեղ, բայց ես գիշերել եմ այդ մեծ սև քարի վրայ, — կրկնեց երեխան: — Եւ ես չը խեղդուեցայ, որովհետև ինձ փրկեցին ծովի քաջքերը:

— Ի՛հ, բաւական է դարդակ-մարդակ խօսես, — ընդհատեց նրան Փրանսուան: — Ի՛նչ քաջքեր, բան չունես, ոչ աշխարհիս երեսին և ոչ էլ ծովի մէջ քաջքեր չըկան: Քեզ ուղղակի փրկել է բախտի բերմունքը: Ծովը հանդարտ է եղել, իսկ եթէ բարձրանար — «Սև կովը» ջրի տակով կ'անէր և այն ժամանակ, բալամ, գու էլ կըգնայիր վերին Երուսաղէմ:

— Ես երբէք չէի խեղդուիլ, — համարձակ պնդում էր երեխան, — ես կարողանում եմ թռչել: Դու չէս հաւատար, թէ ես ինչ լաւ թռչում եմ: Ես ամբողջ գիշերը թռչում ու լողում էի ալիքների վրայ:

— Քիչ խօսիր, — ծիծաղելով ասաց Փրանսուան, — դու, երևի, մինչև այժմ էլ զառանցում ես. նայիր, շորերդ բոլորովին չոր են, իսկ դու հաւատացնում ես, որ ամբողջ գի-

շերը լողալիս ես եղել: Ինչպէս երևում է, քաղցից ու ցրտից դու ինքնամոռացութեան մէջ ես ընկել: Ա՛յ, ա՛ռ՝ մի քիչ հաց կեր, տանից եմ հետս վերցրել, ա՛յ, այս շիշի մէջ էլ գինի կայ, խմիր մի քանի կում և յետոյ ինձ մի լաւ հասկացրու, ինչպէս կարողացար փախչել սապատող դերձակի ճանկերից:

Կաղլիկը ուրախ-ուրախ առաւ հացը և իր ոյժերը վերանորոգելուց յետոյ պատմեց ամենը, ինչ որ իրան պատահել էր: Ի

— Ձէ, բալամ, մենք չենք կարող տուն վերադառնալ: Դու գիտես, թէ ինչքան յամառ է մեր հայրը: Նա քեզ իսկոյն կը քօթկի և անպատճառ կը տանի Դիվի չարագործ-սապատողի մօտ: Իսկ մեր մայրը իր արտասուքով մեզ չի օգնիլ: Աւելի լաւ է, գնանք Տրուվիլ քեռի Լակալի մօտ: Նա քեզ անպատճառ նաւաստի կը գրի իր ծանօթ նաւերից մէկի վրայ:

— Բայց ինձ նաւաստի չեն ընդունիլ, — տխրութեամբ պատասխանեց Կաղլիկը. — հայրիկն ասում էր, թէ կաղերը միայն ընդունակ են դերձակութեան:

— Խօսել չի հարկաւոր դրա մասին, գնանք Տրուվիլ: Այստեղ է, հեռու չէ, մեր քթի տակն է: Երեկոյեան ես կարող եմ էլի տուն վերադառնալ:

— Ե՛լ, լաւ, գնանք Տրուվիլ, — ուրախ-ուրախ ասաց Կաղլիկը: — Եթէ մայրիկն առողջ է, իսկ հայրիկն էլ ինձ վրայ չի մտածում, ինչ պիտի շինեմ տանը. աւելի լաւ է որ ես ծովը գնամ: Ծովն անշուշտ ինձ սիրում է: Տեսնո՞ւմ ես, ես այս գիշեր չը խեղդուեցի — նշանակում է որ նա ինձ խրդճում է:

Երեք ժամից յետոյ երկու եղբայրները հասան Տրուվիլ: Այն ժամանակ Տրուվիլը ձկնորսների մի աղքատիկ գիւղ էր. Լական իր եօթն որդիներանցով և իր ամուսնով ապրում էր այդտեղ, ծովափի մօտ գտնուած մի խրճիթում: Նա ունէր մակույկ, որն ամբարցած էր ծովի ավին: Նա մեծ սիրով ընդունեց երկու եղբայրներին և գովեց Կաղլիկին, որ նա գերադասել է նաւաստի կոչումը, իր կարծիքով, ատելի դերձակութիւնից. նա հիացաւ, երբ լսեց որ երեխան գիշերել

է ծովափեայ ծայռի վրայ, երգուեց Աստծոյ անուանով, որ ճակատագիրը սահմանել է նրան տանել իր կեանքում ամեն տեսակ արկածներ և խոստացաւ նոյնիսկ հետեւեալ օրը աշխատել Կաղլիկին նաւաստի ընդունել տալ արքունական կամ առւտրական նաւերից մէկի վրայ:

— Իսկ դու, սիրելիս, սուս ու փուս գնա՛ տուն, — ասաց նա Թրանսուպին, — և տանը ոչ ոքի չ'ասես թէ՛ երեխան ինձ մօտ է: Սապատող-ձախլիկը մինչև երեք ամիս չի գալ ձեզ մօտ, իսկ այն ժամանակ արձակ-համարձակ կարելի կը լինի յայտնել հօրը, որ եթէ նրա փոքր որդին հակառակ հօր կամքին նաւաստի է մտել, թող գոնէ նա մխիթարուի նրանով, որ երեխան խոյս է տուել մի որևէրէ գերձակից ծեծուելու ստորութիւնից:

Թրանսուան շնորհակալութիւն յայտնեց իր քեռուն նրա տուած բարի խորհուրդի համար, յանձնեց Կաղլիկին մօր ուղարկած շորերի կապոցը, նոր ոտնամանները, մի քսակ սև փող, մի փոքր էլ արծաթ և իրանից էլ աւելացնելով երկու ոսկէ դրամ ու համբուրելով եղբօր երկու թշերը, ճանապարհ ընկաւ տուն:

Քեռի Լակալը շատ բարի և առաքինի մարդ էր: Նա Աստուծոյ տակին միայն մի պակասութիւն ունէր — սիրում էր կոնծել: Բայց նրա կինը մի կատարեալ կախարդի էր նմանում՝ բարձրահասակ, նիհար, կեղտոտ, չթի փաթթօցը գըլխին: Բացի դրանից նա այնպէս երկար մօրուս ունէր, որ հեռուից տղամարդու էր նմանում: Կաղլիկի ընդունելը բոլորովին նրա սրտովը չէր. հանաք բան է, այնպիսի մի մեծ ընտանիքում մի աւելորդ մարդ էլ կերակրել: Նա համարում էր երեխայի ամեն մի կերած պատառը և բարձրաձայն նրան «աչքածակ» էր անուանում:

Քեռուն չըլաջողուեցաւ Կաղլիկին ընդունել տալը. ամենքը մերժում էին ընդունել նրան կարճահասակ և կաղ լինելուն պատճառով: Ուր որ նրան տանում էր քեռին, ամեն տեղ էլ միևնոյն պատասխանն էին տալիս. «Ի՞նչներես է պէտք մեզ այդ չօլախը»:

Լակալ քեռակինի զահլան գնում էր նրանից և ամեն պառկելիս կատաղած ասում էր իր մարդուն.

— Ե՛րբ պէտք է մենք ազատուենք քո այդ աչքածակ-ազգականից, ճշմարիտ համբերութիւնս բոլորովին հատաւ: Վաղը դերձակը ճրուվիլով պիտի անց կենայ. նա գնում է Հօնֆլեր ապրանք առնելու: Յանձնիր նրան գերձակին: Փչացած երեխաներին քօթակ է հարկաւոր. իսկ «ձախլիկը» փորձուած մարդ է, նա շատ լաւ գիտէ սաստել երեխաներին:

Խեղճ Կաղլիկը ամբողջ մարմնով սառսուռ գգաց, երբ լսեց այդ սարսափելի խօսքերը: Լակալն իր որդեկրանցով պառկել էր յատակի վրայ, իսկ Կաղլիկին, ինչպէս մի հիւրի, տեղ էին տուել չարագախի վրայ, որտեղից նա փոքրիկ լուսամտով լսում էր ներսի խօսակցութիւնը: Կաղլիկն զգուշութեամբ վեր կացաւ, նայեց լուսամտից որ տեսնի թէ՛ այնտեղ է արգեօք այն շարժական սանդուղքը, որը քեռակինը երեկոյեան դրել էր չարագախը բարձրանալու համար: Սանդուղքը չըկար: Վերագառնալով իր տեղը, նա սկսեց ազատուելու մի հնար մտածել:

— Գոնէ ծովը բարձրանար մինչև իմ լուսամուտը, — մտածում էր նա, — այն ժամանակ ես աներկիւղ սրտով կը ցատկէի ալիքների մէջ, և շատ կարելի է ես չըխեղդուէի, որովհետև ծովն ինձ սիրում է»...

Նա շտապ-շտապ սկսեց կապել իր իրերը, բայց քունը չաղթում էր նրան, գլուխը ակամայ դարձեալ ընկաւ բարձի վրայ. յանկարծ բարձրացաւ սաստիկ քամի և սկսեց թրըխ-թրխկացնել լուսամտի կիսաբաց դռնակը, օդի միջից լսելի եղան միևնոյն բարակ ձայները, որ լսում էր երեխան ժայռի գլխին. «Մեզ հետեիր, մեզ հետեիր. ծովի՛ մօտ, ծովի՛ մօտ. մի՛ քնիր, այ՛ երեխայ, պարզիր թւերդ և թռի՛ր»: Կաղլիկի սիրտը կրկին սկսեց ուրախութիւնից թնդալ, նրան այնպէս էր թւում, կարծես թէ կրկին թւեր են բանում մէջքին: Ինքն էլ չ'իմանալով իր արածը, երեխան մտաւ նեղ լուսամուտով, ձեռները ձգեց նաւի կայմին, որը լինւած էր ձկնորսի խճթի կտրին, և որի վրայ աղաւնիներ էին թառում, յաջողութեամբ ցած իջաւ գետին և մի քանի րոպէից յետոյ հասաւ քեռու մակույկին:

Մակույկից հաստ շղթան ամրացրած էր ափին և կող-

պած կողպէքով. մակուկը չըկարողացաւ նրան ազատելու հը-
նար դառնալ, մնում էր միայն—փախչել: Կաղլիկը, շնորհիւ
պարզըկայ գիշերին և փոքր ի շատէ ծանօթ ճանապարհ-
ներին, շտապ քալելով դիմեց դէպի պատնէշների և այն
ժայռերի կողմը, որոնց Փրանսուան «Սև կովեր» էր անուա-
նում: Այդ ընկերաց սկսւում է նրա ծովի ավերին թափա-
ռելը: Երկար թափառելուց յետոյ, նա հասաւ մի քարայրի,
որ գտնւում էր ժայռի մէջ: Երեխան մեծ զարմանքով այն-
տեղ տեսաւ մի քարէ կոպիտ նստարան և խարոյկի հետքեր:
Երեւի, այնտեղ մի ժամանակ մարդիկ են ապրելիս եղել,
բայց երեւի շատ առաջ, որովհետև քարայրի մուտքի առաջ
գտնուած կանաչ խոտերի վրայ մարդու ոտների հետքեր
չէին երևում:


Քաղցր քնից յետոյ, Կաղլիկը միւս օրն առաւօտեան գը-
նաց մօտակայ Վելիէ գիւղը հաց գնելու, յետոյ նա գոհ
սրտով կրկին վերադարձաւ իր քարայրը. երեւակայելով թէ
այդ իր թագաւորութիւնն է, ուր պիտի նա անց կացնի իր
ամբողջ կեանքը: Ձեզ ծիծաղելի կըթուայ, որ մի տասներկու
տարեկան երեխայ, որի զրպանում երկու-երեք էկիւ փող
կար, կարծում էր թէ այդ կրբաւականնայ իրան մինչև իր
կեանքի վերջը: Հէնց ասենք թէ՝ նա իր հետ շատ փող էր
վերցրել, բայց չէ՞ որ նրան շոր ու ոտնաման էր հարկաւոր,
խակ այդ անապատ տեղում բացի վայրի խոտից, մամուռից
ու ծաղիկներից, ոչինչ չէր բսնում: Վերջապէս նա ինչ պի-
տի անէր, երբ ցուրտ ձմեռը գար: Ինչո՞վ կը կերակրուէր,
որտեղից նա կըճարէր անուշահամ ջուր: Չըմոռանաք որ
անգրագէտ երեխայ էր, նա ոչինչ չէր իմանում և մինչև
անգամ մտածելու սովորութիւն չուներ. նրա համար միայն
մայրն էր մտածում ու հոգում, և նա ակամայից կարծում
էր թէ մայրն այնտեղ, իր մօտն է, իսկոյն իր որդու համար
արգանակ կ'եփի, իսկոյն անկողինը կը պատրաստի. նա հա-
զարից մի անգամ էր միայն լիշում, որ ինքը յաւիտեան
պիտի մնայ անապատում, բայց այդ խօսքը յաճախ կրկնե-
լով, նա ընտելացաւ գրան և ուրախ էր որ փախաւ դեր-
ձակից:

Քարանձաւը շատ դիւր եկաւ Կաղլիկին. նա ամեն երե-
կոյ վերադառնում էր այնտեղ, ինչպէս իւր տունը, կերակր-
ւում էր Վելիէ գիւղում գնած հացով ու իր ժողոված խխունջ-
ներով. նա խմելու համար այն ջուրն էր գործ ածում, որ
գտնւում էր ծայրերի մօտ գտնուած փոսերում, որովհետև
արեգակի ճառագայթներից անհետանում էր ծովի ջրի աղի
և դառն համը: Երեխան շատ ափսոսում էր որ իրանց կո-
վերից գոնէ մէկն այնտեղ չէր: «Եթէ ես մի կով ունե-
նայի,—ասում էր նա,—ես այստեղ շատ ուրախ կ'ապրէի»:

Բայց չ'անցաւ երեք օր, նա սկսեց մենակութիւնից սաս-
տիկ տիրել: Մանաւանդ նա գիշերները շատ էր վախենում:
Խնչ տեսակ երագներ ասէիր, որ նա չըտեսներ: Նա միշտ
երազում տեսնում էր չար սապատող-դերձակին, իր հօրը, որ
բարկացած մտնում էր քարայրը և հայհոյում էր նրան: Սառը
քրտինքը ծլծլում էր երեխայի մարմնից, նա վեր էր թըռ-
չում խելագարի նման իր անկողնուց, որ ինքն էր պատրաս-
տել փափուկ մամուռից և խոտերից, մի քանի ընկեր
էր նա նստած իր տեղում, աշխատելով հանգւտացնել ինքն
իրան: Բոլորից վատ էր այն գիշերը, երբ ծովի վրայ փոթո-
րիկ էր և անձրևը շիթ-շիթ թափւում էր երկնքից: Խոր-
հրդաւոր ձայները նրան հանգիստ չէին տալիս. երեխային
աւելի անհանգստացրին այն ձայները, որ անդադար կրկնում
էին. «գիգիւիտ, գիգիւիտ», որ Փրանսերէն նշանակում է
տասնութ: Այսինքն այն 18 լիւրը, որ Կաղլիկի հայրը
խոստացաւ վճարել դերձակին իր որդու առաջին տարուայ սո-
վորեցնելու վարձը: Այժմ երեխան այնպէս էր համոզուել, որ
չար դերձակը քաջ է դառել և յանդիմանում է նրան խաժ
18 էկիւի համար:

Առաւօտեան փոթորիկը հանդարտուեցաւ, անձրևը զո-
վացրեց գետինը, բոլոր խոտերը և տերեւները ծածկուեցան
ջրի փայլուն կաթիլներով. լուսաբացին քարայրից շատ մօտ
լսուեցան կովի բառաչոց, այծի մկրկոց և շների հաջոց:
Կաղլիկը մի փոքր սիրտ առաւ, մտածելով որ իրանից մօ-
տիկ մարդկային բնակութիւն կայ և ինքը մենակ է այդ ա-
նապատում: Բայց և այնպէս «գիգիւիտ, գիգիւիտ» ձայնները

859
701



հետզհետե աւելի բարձր էին հնչում նրա ականջին, կարծես գերձակների ամբողջ մի համաբուլթիւն էր ծաղրում Կաղլիկին:

Խեղճը կուչ եկած պառկած էր և վախենում էր տեղից շարժուել, և երբ օրը բոլորովին լուսացաւ, նա դուրս եկաւ այրից, նայեց իր շուրջը, բայց ոչ ոքի չբռնեաւ, բացի ծովային թռչունների երամից, որոնք գիշերելով պատնէշների վրայ, այժմ պատրաստուած էին ճանապարհ ընկնել հեռու:

Կայտառ եղալիկները իրանց զմբուխտէ թւերով ուրախ ուրախ պտտուած էին վերեւ, նրա գլխին, զանազան տեսակ կոցարներ արագութեամբ թռչում էին նրա մօտով, իսկ մի մեծ ծաղկալից ճայ՝ գլուխը դրած մէջքին և ոտները ձգած, կամաց լողում էր օդի մէջ և ողորմելի ձայնով կանչում էր:

Կաղլիկը չբռնէր այդ թռչունների անունները, որովհետեւ իրանց գիւղում ոչ լճակ կար և ոչ էլ գետ, այդ պատճառով էլ նա չըկարողացաւ գլխի ընկնել, որ գիշերը նրան անհանգստացնող ձայները կոցարներն էին հանում:

Օժ գետի հովտի գիւղացիները շատ անահաւատ էին և հաւատում էին զանազան բարի և չար քաջքերի, ուրեմն շատ պարզ է, որ Կաղլիկն էլ վարակուած կրկին էր ծնողաց նախապաշարմունքներով:



III



նից երբ զարթնեց երեխան, շատ ծարաւ էր. այն ջուրը, որ նա մինչև այժմ գործ էր ածում, մի տեսակ անախորժ հողի համ էր տալիս: Նա սկսեց այս ու այն կողմ ման գալ աղբիւրի ջուր գտնելու համար: Բարձրանալով ժայռի վրայով, նա վերջը գտաւ մի բարակ ջուր, որից վայրի չիմանի հոտ էր գալիս: Որովհետեւ այդ ջուրը սաստիկ բարակ էր և կաթիլներով էր հոսում, ուստի նա դրեց նրա տակ մի քանի մեծ-մեծ, քար կտրած խիտնչներ, որոնց դուրս էին շարժել այստեղ ծովի ալիքները. այդպիսով նա թարմ ու սառն ջրի պաշար պատրաստեց իր համար: Կարիքը շատ բան է անել տալիս մարդուն. այդպէս էլ մեր Կաղլիկը, որ երբէք ոչ մի բան չէր շինել, այժմ աւամայ ստիպուած էր աշխատել: Ասում են, «անճարը՝ կուտի բանջարը»: Ամենից առաջ նա եղէգնից մի կողով հիւսեց խիտնչներ և մանր ձկներ ժողովելու համար. այդ մանր ձկներին երեխայի ներկայութեամբ տեղատուութիւնից յետոյ ծովային թռչուններն էին հանում աւազի տակից իրանց երկար կտուցով: Մինչև անգամ մի օր նա կարողացաւ քարով մի ծովային կաքաւ սպանել ու խորովել նրան:

Գուք գուցէ հարցնէք, թէ նա այդ բանն ինչպէս արեց:

Այդ ժամանակներում ամեն մի գիւղացի երեխայ իր գրպանում մի երկաթի օղակ և մի աբեթ էր պահում, այնպէս որ նա կայծաքարի օգնութիւնով հեշտութեամբ իր համար կրակ էր վառում: Կաղլիկը մի քիչ չոր տերևներ և եղէգն ժողովեց, խարոյկ վառեց և խորովեց նրա վրայ սպանած թռչունը: Նրան այնպէս էր թւում, թէ իր կեանքում այդպիսի համեղ խորոված չի կերել. նա շատ ցաւում էր, որ չի կարողանում հիւրասիրել իր մօրը և Ֆրանսուա եղբօրը: Միայն հացն էր պակաս, որ Կաղլիկը արգէն մաքրազարգել էր մինչև վերջին փշրանքը, իսկ նոր հաց գնելու համար էլ

նա վախենում էր գնալ մօտակալ գեղը, որ մի գուցե դեր-
ձակը ճանապարհին նրան պատահի և իմանալ նրա վախըս-
տատեղին:



Այդ պատճառով էլ նա վճռեց, որքան կարելի է, ա-
ւելի երկար ժամանակ մի կերպ
կառավարուել առանց հացի և
նրա տեղ ձու գործ ածել: Բայց
խոշոր ձուլաներ ճարելու համար
նա մտադրուեցաւ աւելի շատ վեր
բարձրանալ ժայռի վրայ, որովհե-
տեւ, նրա կարծիքով, մեծ - մեծ
թռչունները ամենից բարձր էին
շինում իրանց բները: Կաղլիկը լի-
նելով անգրագէտ, գրքերում չէր
կարդացել, որ ծովային թռչուն-
ների մեծամասնութիւնը բոլորո-
վին բոյն չի շինում իր համար,
այլ ուղղակի իր ձուլաները թաղ-
ցնում է աւազի տակ կամ ժայռերի արանքներում: Բայց
այնուամենայնիւ նա ձուլաներ ճարելու գիտաւորութեամբ
սկսեց մագլցել սարսափելի ժայռի բարձրութեան վրայ:

Պուք կարծում էք, թէ երեսան վախենում էր. — ա-
մենեին, բարձր և ուղղահայեաց ժայռը, որ կազմուած էր
փուխը աւազաքարից, մինչև այն աստիճան զառիվայր էր
ու վտանգաւոր, որ մինչև անգամ մեծ մարդուն կարող էր
վախեցնել. բայց Կաղլիկը, ամբողջ վեց օր ապրելով ազա-
տութեան մէջ, անմարդաբնակ տեղում, կարծես մի նոր
կեանք էր ստացել: Փորձը և կարիքը նրան սովորացրին
զգուշութիւն և նախատեսութիւն. նա կարծես զգում էր
որ իր վրայ «արիութեան թեւեր» են բռնում և օրէցօր ա-
ւելի համարձակ ու անվեհեր էր դառնում:

Պիտուութեամբ բարձրանալով մինչև ժայռի կատարը,
Կաղլիկը վարձատրուեցաւ իր ջանքերի համար, որովհետեւ նա
հէնց առաջին պատահած ժայռի արանքում գտաւ չորս հատ
խոշոր ու կանաչ ձուլաներ, որ գեռ բոլորովին տաք էին.

նա առաւ այդ ձուլաները և զգուշութեամբ դրեց կողովում
որ կապել էր մէջքին և որի մէջ փափուկ խոտ էր դարսել:

Նոյն իսկ այդ տեղում նա գտաւ երեք հատ երկար,
ձիւնի պէս ճերմակ փետուր, որ իսկոյն ցցեց իր գլխարկի վրայ:

Մնալով այստեղ մինչև երեկոյ, նա կարող էր գուցե
էլի ձու և փետուրներ գտնել, բայց խոհեմութիւնը խոր-
հուրդ տուեց նրան հեռանալու. այստեղ գողեր չըկային, որ
նա վախենար, իսկ թռչուններին նա կարողանում էր վա-
խեցնել: Նա վճռեց որ աւելի լաւ կը լինի, եթէ ամեն ա-
ռաւօտ բարձրանայ այստեղ նոր ձուլաներ ճառելու, իսկ թռչ-
ուններին ընտելացնի իր ներկայութեան:

Կաղլիկը ուղիղ մի շաբաթ ապրեց կատարեալ առանձ-
նութեան մէջ. նա մանրամասնօրէն ուսումնասիրեց իր ժայռի
բոլոր ծակ ու ծուկը, ծանօթացաւ նրա բոլոր նեղ շաւիղ-
ների հետ, ճանաչեց բոլոր պատնէշները, թռչուններից ի-
մացաւ, թէ որտեղ կարելի է ամենահամեղ խիւսկներ ճարել
և օձաձկներ գտնել. վերջի վերջոյ նա չէր իմանում, թէ ին-
չով անցկացնի իր օրը: Երբ նա չափից դուրս լողնում էր,
պառկում էր իր քարանձաւում, փափուկ խոտերից շինած
անկողնում, և ժայռի միջի եղած ծակով նայում էր դէպի
ծովը և դիտում նրա ափերը:

Եղանակը շատ ախորժելի էր. մայիս ամսուայ արեգակը
չորացրել էր պատնէշների միջի տղմոտ գետինը և տեղա-
տուութեան ժամանակ ծովի ափին մարդիկ սկսեցին խումբ
խումբ զբօսնել: Կաղլիկը շատ էր ցանկանում կանչել նրանց
իր լուսամուտից.

— Զմարիտ, ի՞նչ լաւ եղանակ է, ի՞նչ լաւ կը լինի հի-
մա զբօսնելը: Բայց նա վախենում էր այդ անելու, որ մի
գուցե նրան հարցնեն թէ՛ ո՞վ է նա և այդտեղ ի՞նչ է շի-
նում: Նա դեռ իր մանկութեան հասակում լսել էր, որ շրջ-
մոյրիկներին հալածում են և մինչև անգամ կալանաւորում
են: Բայց նա շատ ճշմարտախօս և առաքինի լինելով,
չէր կարող իր սեպհական անունը փոխել և մի սուտ պատ-
մութիւն հնարել իր համար. այդ պատճառով էլ նա իր քա-
ղանձաւից դուրս չեկաւ:

Միւս առաւօտ որոշ կերպով Հասան նրա ականջին եկեղեցու զանգի ձայներ: Պատարագի զանգերն էին հնչում. երեխան Հասկացաւ որ այդ օրը կիրակի էր, և սրտով ցանկանում էր գնալ այնտեղ, մարդիկ տեսնել. նա ցանկանում էր նրանց հետ միասին աղօթել: Նա ուշի ուշով լուսացուեցաւ, մազերը ձեռքով ուղղեց, մաքրեց շորերը և իր երեք ձեռմակ փետուրները ամրացրեց գլխարկի կողքին: Խնքն էլ իրան հաշիւ չը տալով թէ ո՛ր և ի՞նչու համար է գնում, Կաղիկը քանդեց պատնէշներից մէկի մի մասը և կարճ ճանապարհով իսկոյն հասաւ Վիլիէ: Որովհետեւ այդ գիւղում նա ոչ մէկ ծանօթ չուներ, իսկ սապատող-դերձակը պէտք է Հօնֆլերում լինէր, ուստի նա արձակ-համարձակ անցաւ գիւղի գլխաւոր փողոցով և քայլերը ուղղեց դէպի եկեղեցին: Այ տարօրինակ բան, նա այդտեղ ոչ ոքի հետ ծանօթ չէր, բայց ամենքն ուշադրութեամբ նայում էին նրա վրայ և մինչև անգամ շրջում էին և յետ նայում: Այդ բանը շփոթեցրեց երեխային և նա մտադրուեց վերադառնալ տուն, բայց յանկարծ նկատելով Հացագործի խանութը, բերանը ջրակալեց: Նա մտաւ ներս՝ հաց գնելու:

—Քանի հատ հաց ես ուզում,— քաղցրութեամբ հարցրեց Հացագործը, ուշի-ուշով զննելով Կաղիկին:

—Մի հատ, բայց ամենամեծը լինի, — պատասխանեց երեխան, որ ուզում էր մի քանի օրուայ պաշար ունենալ:

—Այ, էս իմ աչքիս վրան, համեցէք, ես մինչև անգամ երկու-երեք այսպէս հաց կըտամ, եթէ կարողանաս տանել:

—Ուրեմն աւելի լաւ է երեք հատ տուեցէք, ես կարող եմ տանել:

—Միթէ ձեր ընտանիքը այդքան մեծ է:

—Շատ կարելի է,— քաջուկով պատասխանեց երեխան, որ չէր ուզում սուտ խօսել:

—Տեսնում ես ինչ հպարտն է, երկար խօսել էլ չի ուզում. նկատեց Հացագործը ժպտալով,— իսկ ո՞վ ես դու, որտեղ ես ապրում, դու ախտեղացի չե՞ս:

—Ոչ, ախտեղացի չեմ,— կարճ կերպով պատասխանեց

Կաղիկը.— ինձ տուր իմ երեք հացը, ես խօսելու ժամանակ չուներիմ, և շուտով ասացէք, ինչքան պիտի վճարեմ:

—Սեղանում հացը թանգ է, բայց եթէ գլխարկիդ այդ երեք փետուրը տաս ինձ, այն ժամանակ ես լանձն կառնեմ ամբողջ մի ամիս՝ կիրակի օրերը ձրիաբար քեզ այսպիսի երեք մեծ մեծ հաց տալու: Տեսնում ես, թէ ես ի՞նչ համարիտ մարդ եմ. հը, համաձայն ես:

Կաղիկն առաջ այնպէս էր կարծում, թէ Հացագործը նրա վրայ ծիծաղում է. բայց տեսնելով որ նա պնդում է իր ասածը, երեխան իսկոյն գլխի ընկաւ, որ նրա փորացաւ փետուրների մասին է, որոնք երեւի շատ թանգագին են և դրա համար էին ամենքն աչքերը պլըզում նրա վրայ: Նա արագութեամբ պոկեց փետուրները և թագցրեց իր ծոցում:

—Վերցրէք հացի գինը, իսկ փետուրները չեմ տալ,— լուրջ կերպով պատասխանեց նա:

—Դէ, լաւ, ուզում ես խաթերդ համար շաբաթական երկու անգամ ձրիաբար երեք-երեք հաց կը տամ:

—Շնորհակալ եմ, չեմ ուզում վերցրէք փողը:

—Լաւ, ուզում ես շարունակ երկու ամիս շաբաթական չորս-չորս հաց տամ. հ'ը, լաւ չեմ ասում:

—Չեմ ուզում էլի, փիէ,— պատասխանեց Կաղիկը,— փետուրներն ես չեմ տալ:

Հացագործը տուեց նրան երեք հաց: Երեխան վճարեց փողը և դուրս գնաց, բայց որովհետեւ պատնէշների կողմը գնալու համար նա պէտք է ծռուէր հացագործի խանութի գլխով, ուստի և նա կողքի լուսամուտից լսեց, թէ ինչպէս տէրը բարձրաձայն ասում էր իր կնոջը.

—Տեսնո՞ւր, չը համաձայնուեցաւ տալ փետուրները 48 գրուանքայ հացով:

Կաղիկը կանգ առաւ լուսամտի տակ և սրեց իր լսելիքը:

—ձիշտ այն փետուրները սև ձկնկուլի էին,— հարցրեց կինը:

—Վահ, ի հարկէ. այն էլ ամենագեղեցիկ տեսակից:

—Սէ՛խ, ափսոս,—պատասխանեց կինը։—Սե ձկնկուլները հիմա բոլորովին չու՞մ են. ամեն մի այդպիսի փետուր հիմա ոչ մի տեղ մի լուրիգօրով *) չեն տալ։ Մէկ լաւ մտածիր, դու այն երեք փետուրների մէջ երեք լուրիգօր փող կաշխատէիր. վաղիւր շուտով այն երեխայի յետեւից և ամեն մի փետուրին երեք լիվրանոց էկիւ առաջարկիր. գուցէ նա աւելի շուտով փողն ընդունի, քան թէ հացը։

Բայց հացագործը չըկարողացաւ բռնել Կաղլիկին, որովհետեւ նա իսկոյն ծկեց իր սիրելի քարանձաւը։ Հացագործի խանութում պատահած դէպքը նրան շատ էր զարմացնում և ինքն իրան հազար տեսակ բաներ էր մտածում և չէր իմանում, թէ ուղի՞ղ է որ հազուադէպ են սե ձկնկուլի փետուրները։

Երեխան իսկապէս ոչ թէ շահասիրութիւնից գրողւած ուրախանում էր, այլ ընդհակառակը նա հպարտանում էր իր երեք փետուրներով, որովհետեւ առաջինը՝ ինչպէս երեւում էր, հազուադէպ էին, իսկ երկրորդը, որովհետեւ նա ինքն էր անձամբ ձեռք բերել։ Մօտենալով արդէն պատնէշներին, նա յետեւից լսեց դերձակի ծանօթ և բարձր ձայնը։

—Ստում էք դէպի այս կողմը փախաւ։ Դուք հանգիստ մնացէ՛ք, ես նրան իսկոյն կը բռնեմ, և եթէ չը համաձայնուի փետուրները ծախել ինձ վերայ, ես ուժով կը խըլեմ նրա ձեռքից։ Այն ժամանակ փետուրները մեզ ձրի կընստեն։

Թէպէտ դերձակը դեռ հացագործի խանութի մօտ էր, բայց նրա թափանցող ձայնը արձագանք տուեց մինչև պատնէշները։ Երկչոտութեան թւերը մի ակնթարթում Կաղլիկին փախցրին թիւերի տակ, բայց նա շուտով կրկին սթափուեցաւ։

«Ի՞նչպէս,—մտածեց նա,—մի՞թէ ես առաջուայ պէս հիմա էլ վախկոտ եմ. արձակ-համարձակ մագլցեմ ժայռերի վրայ, լողանամ ծովի մէջ ու այժմ յանկարծ վախենամ

*) Լուրիգօրը նոյնպէս ֆրանսիական հին ոսկէ դրամ է, որ արժէր 24 լիվր, իսկ մեր փողով մօտ 5 ռուբլի։

սապատողից։ Ոչ, այժմ ժամանակս է տղամարդ լինելու. վախկոտները միշտ ուրիշներից են կախում ունենում, իսկ ես ուզում եմ միայն ազատ ապրել։ Նս այժմ քաջ և ուժեղ տղամարդ եմ դառել, այլ ևս սապատողը չի կարող դիպչել իմ մի հատ մազին. այժմ ես կարող եմ նրա «օխտիցը» գալ։ Մանաւանդ որ Լակալ քեռին ասում էր, թէ այդ դերձակը միայն թուլերի ու վախկոտների մօտ է քաջանում։ Համարձակ, առաջ»...

Երեխան հպարտ-հպարտ ցցեց կրկին փետուրներն իր գլխարկի մէջ. հացերը դրեց գետնին և դնելով ուսին իր երկաթածայր ձեռնափայտը, քաջութեամբ առաջ դնաց դիմադրելու դերձակին և, ինչպէս ինքը մտադրուեց, նրա ճաշն եփելու։ Բայց և այնպէս սապատողին տեսնելուն պէս՝ վհատուեցաւ, բայց լիշելով քաջութեան թւերը, նա նորից սիրտ առաւ։ Նա ցատկեց մի մեծ քարի վրայ և ձեռնափայտը սկսեց սաստիկ արագութեամբ պտտացնել այս ու այն կողմ։

Սապատողը սառած մնաց և ըստերեւոյթին վախեցաւ։

—Կաղլիկ ջան, սիրելիս, մի՞թէ ինձ մոռացել ես,—բացաբանչեց դերձակը մի փոքր լուրթիւնից յետոյ, աշխատելով ծածկել իր վրդովմունքը ծիծաղով։—Նս խօսքո թշնամին չեմ, որ այդպէս ես անում, ես քեզ ոչինչ չեմ անիլ։

—Ինչպէս չէ,—հակառակեց երեխան,—ես քեզ լաւ եմ ճանաչում, դու ուզում ես իմ երեք փետուրները գողանալ։ Այդպէս չէ։

—Տէր ողորմե՛ա... իսկ այդ քեզ ո՞վ ասեց։

—Քաջքերն ինձ այդ յայտնեցին,—պատասխանեց երեխան, շարունակելով կանգնել քարի վրան և աշխատելով անյողդոյդդ կերպով պաշտպանել իր ազատութիւնը։

Այդ խօսքերը լսելուն պէս «ձախիկը» լեղապատառ եղաւ և երկիւղից սկսեց դողդողալ. նա կուրօրէն հաւատում էր քաջքերին, կախարդներին և տեսիլքներին։

—Ե՛, լաւ, սիրելիս, այդպիսի հանաքներ մի անիլ,—ասաց նա։—Միայն ինձ մի գաղտնիք յայտնիր — ո՞րտեղ են ապրում այն ձկնկուլները, որոնք այդպիսի գեղեցիկ փետուր-

ներ ունին. ինձ միայն այդ է հարկաւոր, ուրիշ ոչինչ: — Նրանք ապրում են այնտեղ, ուր միայն քաջքերն են լինում: Եթէ դու իմ մի մագին դիպչես, ես քեզ խեցգետինի նման իսկոյն կըբռնեմ, քաշ կըտամ նրանց մօտ, մինչև ժալօր կատարը և այնտեղից քեզ կըշարտեմ ծովը, — ասաց Կաղիկը:

Գերձակն այնպէս երեւակայեց, թէ երեխայի սպառնալիքը իսկապէս կարող է իրականանալ, շրջուեցաւ և առանց լետ նայելու՝ սարսափած փախաւ Վիլիէ գիւղը:

Կաղիկը չըկարողացաւ զսպել իր ծիծաղը, երբ տեսաւ սապատողի ծուռ ու մուռ ոտների բարձրացրած փուշու ամպերը, և վերցնելով իր հացը, գնաց քարանձաւը:

Այդ օրուանից նա շատ լաւ էր ապրում իր առանձնութեան մէջ. միայն մի բան էր նրան անհանգստացնում — թանգագին փետուրների աւելի շատ ձեռք բերելու ցանկութիւնը, որպէս զի դրանով զրգուի գիւղի բնակիչների նախանձը և չարացնի սապատող - դերձակին: Այդ վատ զգացմունքը նրա մէջ զարգացաւ նոյն իսկ այն օրուանից, երբ նա շփուեցաւ մարդկանց հետ. մինչև այդ ժամանակ նա միայն մի նպատակ ունէր — հայթհայթել իր օրական ապրուստը, իսկ շահասիրութիւնը նրա մտքովն չէր էլ անց կենում:

Մի անգամ առաւօտեան, առնելով իր ձեռափայտը, Կաղիկը գիմեց գէպի այն ժալօր գլուխը, որտեղ նա ապրում էր և որի վրայ վաղուցուանից ուզում էր բարձրանալ. այդ ժալօր լի էր զանազան տեսակ փոսերով, դուրս ցցուած փուխը քարերով ու խորդուբորդ տեղերով, որոնց տակ «Սպիտակ և սև կովեր» անունով մի շարք պատնէշներ կային: Երեխան ապշեց, երբ մի փլատակի վրայ մի ինչոր փարօսի նման շինութեան աւերակներ տեսաւ, որտեղից հին ժամանակներում, երևի, դիտում են եղել պահապան նաւաստիները ծովի նաւերին, և բռնելիս են եղել գաղտնի աղ վաճառողներին: Սարսափելի էր տեսնել, թէ ինչպիսի բարձրութեան վրայ էր գտնուում այդ շինութիւնը: Ծովը փոքր առ փոքր քերում էր ժալօր, հետզհետէ պոկելով շինութեան կտորները, և այժմ մինչև անգամ նրա կէսն էլ չէր մնացել:



Հէնց այդ աւերակների տակ, մի ուրիշ զառիվայրի մօտ էր գրտնուում Կաղիկի քարանձաւը. նա աւամայ լեղապատառ եղաւ երկիւղից, երբ մտածեց, թէ ի՞նչ կըլինի նրա ճարը, եթէ անգուլթ ծովը շուտով նրա ապաստանն էլ խորտակի: Երեխան ըզգուշութեամբ մագլցելով ժալօրի վրայով և հասնելով մինչև նրա կատարը, թուչունների թագաւորութեան մէջ ընկաւ. մեծ մեծ ձկնկուլներն իրանց կանաչ մէջքով, սպիտակ պարանոցով ու փորով, մաքարտանման մոխրագոյն թևերով խումբ խումբ հաւաքուել էին այդտեղ: Եգ ձկնկուլները նստած էին աւազի վրայ, հաստ ճիւղոտներից հիւսուած իրանց բներում, իսկ արու ձկնկուլները հպարտ հպարտ անցուգարձ էին անում նրանց առաջ. նրանցից մի քանիսը կուռում էին միմեանց հետ, մի քանիսն էլ էգերին կերակրում էին

մանր ձկներով ու խխունջներով, իսկ մնացեալները, որսորդութիւնից յոգնած, յօրանջում էին մարդկանց պէս և մի ոտի վրայ կանգնած՝ ննջում էին:

Միայն արուների կատարներն էին զարգարուած այն գեղեցիկ, երկար ու ճերմակ փետուրներով, որ ցցուած էին Կաղլիկի գլխարկի վրայ:

Այժմ այդ թռչունների փետրափոխութեան ժամանակն էր, այդ պատճառով էլ ժայռի այգտեղը լիքն էր թափ-թփած փետուրներով:

Երեխային տեսնելուն պէս՝ պահապան ձկնկուլը ձայն տուեց և բոլորեքեան շրջուեցին դէպի այն կողմը, ուր կանգնած էր Կաղլիկը:

Երեխան մի փոքր վախեցաւ, երբ տեսաւ որ հարիւրաւոր կարմիր ու կլոր աչքեր ուղիղ իր վրայ են նայում: Էգ ձկնկուլները, որոնց ամեն մէկը մի մեծ հնդուհաւի չափ էր, կարող էին մի քանի ընկերներ կողակցներով սպանել հետաքրքիր երեխային. բայց նրանք այնքան լիմար էին, որ մինչև անգամ չէին կարողանում հասկանալ, թէ ո՞վ է իրանց առաջին կանգնողը — բարեկամ, թէ թշնամի. նրանք մեծ հետաքրքրութեամբ զննում էին նրան, ինչպէս կը զննեն մի նորութիւն:

Կաղլիկը կարողացաւ առանց պատժի թանգազին փետուրների մեծ պաշար ժողովելու և վերադառնալով տուն, մտքումը դրեց սրանից յետոյ որքան կարելի է, աւելի յաճախ այցելել թռչունների թագաւորութիւնը: Դրանից յետոյ երեխան առանց հացի չէր գալիս այգտեղ և վերջի վերջոյ ձկնկուլներն այնպէս ընտելացան նրան, որ արձակ-համարձակ մօտենում էին նրան, ինչպէս հաւեր, և թռչկոտում էին աներկիւղ նրա առաջ:

IV



Կաղլիկն երբ գնում էր մօտակայ Վիլիէ և Օբերվիլ գիւղերը հաց գնելու, միշտ աշխատում էր գիւղացիներից խօսք դուրս քաշել, թէ ինչո՞ւ ոչ ոք չէր գնում պատնէշների մօտ փետուրներ ժողովելու: Բայց մեծ սարսափանքով նա այդ կողմի ծերերից լսեց, որ «սեւ և սպիտակ կովեր» կոչուած ժայռերը շատ վտանգաւոր են, որովհետեւ նրանք ամեն ձմեռ քանդուում են, այնպէս որ երբեմն բաւական է մի մարդու ծանրութիւն, որ յանկարծ կոտորուի ծովափի ժայռից մի կտոր և ցած գլորուելով, ընկնի ուղիղ ծովը:

Միայն նրան մի բան էր մխիթարում — որ իր հարեան թռչունները գեւ չեն չոււմ, կը նշանակի, գեւ վախենալու ոչինչ չը կար:

«Բոլոր կենդանիները բնագոյումով խօս են տալիս այն տեղերից, որ վտանգաւոր են, — ասում էր նա ինքն իրան. — գուցէ իմ ձկնկուլներն էլ ինձ վաղօրօք իմաց տան, թէ երբ պիտի ես փրկութիւն գտնեմ հովտում»:

Կաղլիկը չէր ուզում իր ազատ կեանքը փոխել առաջուայ գերութեան հետ, ուշի-ուշով թագցնելով թէ մեծերից և թէ փոքրերից իր փախստեան տեղը, երեխան անսպասելի կերպով երբեմն երևում էր գիւղերում և նոյնպէս անսպասելի կերպով էլ անհետանում էր, երբէք ոչինչ չըպատասխանելով գիւղացիների հարց ու փորձին: Նա ընտելանալով չափաւորութեան, բաւականանում էր հացով, ձկնով խխունջներով և վայրի պտուղներով: Ամսուայ վերջին փետուր գնողներ երևացին:

Յիսուն հատ գեղեցիկ սև ձկնկուլի փետուրների համար Կաղլիկը 300 լիւր փող ստացաւ — մի չրտեսած գումար այդ հասակի երեխաների համար: Ստանալով այդ փողերը, նա պատրաստուեցաւ գնալու ծնողների մօտ և հատուցանել ման-

կուլթեան հասակում ծնողների իր վրայ արած ծախսը, բայց ամենից առաջ նա Դիմում գլխից մինչև ոտները մի լաւ կուլեց, նոր շորեր ու կօշիկներ գնելով իր համար. այդ դրնա՞ծ բաներին կանխիկ փող վճարելով, նա ամբողջ գիւղում խօսակցութեան առարկայ դարձաւ:

—Նա, ինչպէս երևում է, գանձ է գտել. —ասում էին պառաւները:

—Ոչ, նա սատանայական է դառել, հոգին ծախել է քաջքերին և այնտեղ, պատնէշների մօտ փող է կտրում, — պնդում էին սնահաւատ կանայքը:

Կաղլիկին էլ չէր կարելի ճանաչել. —նա մի շնորհալի տղայ էր դարձել, ամրակազմ ու քաջաւոյճ կազմուածքով և համարեա էլ բոլորովին չէր կաղում:

Նոր շորերը, որ լաւ դերձակի կարած էին, նրան դարձրին մի շախով տղայ: Լակալ քեռու քէֆն եկաւ և իր ազգականին տեսնելուն պէս, նա ուրախութիւնից ծափահարեց:

Ծերունին մեծ հոգսի մէջ էր. մօրուսաւոր ու մըրթմըրթան կինը նոր էր վախճանուել և մխիթարութիւն չէր գտնում իր այդ կորստի համար: Նա Կաղլիկի մօտ շատ լաւուց լետոյ սկսեց մանրամասնօրէն նկարագրել հանգուցեալի հիւանդութիւնը:

—Քեռի ջան, դուք աւելի լաւ է, մերոնցից պատմեցէք, — ընդհատեց նրան երեխան, — մերոնք ո՞նց են, ստղսալամաթ են թէ չէ. վեց ամիս է որ ես նրանց չեմ տեսել:

—Ամենքն էլ ողջ ու առողջ են, քո մասին էլ հանգիստ, — պատասխանեց քեռին. — Փրանսուան հաւատացրել է մօրդ, իբր թէ դու գնացել ես ճանապարհորդելու, և նա էլ ուրախ է, որ վերջապէս հասար քո նպատակին:

Իսկ գերձակը խորշում է քեզանից և հաւատացնում է, որ իբր թէ դու քաջքերի հետ ես լինում և ասում է թէ ես նրան աշակերտ չեմ ընդունիլ: Կեցցես, Կաղլիկ ջան, ինչպէս երևում է, նրա «օխտիցը» եկել ես, այդպէս էլ հարկաւոր է:

—Ոչ թէ «օխտիցն» եմ եկել, քեռի, այլ ձեռնափայտով եմ նրան սպառնացել — ես հիմա էլ առաջուանը չեմ, գիտես:

Իմ մէջքին էլ ձերի պէս արիւթեան թւեր են բուսել և ինչոր լինի չըլինի, ես պէտք է պտտեմ աշխարհիս շուրջը:

Ընթրիքի ժամանակ նրանք երկուսն էլ երկար խօսեցին թուշուկների մասին, և այնտեղ Կաղլիկը համոզուեցաւ, թէ ինչպիսի թիւր հասկացողութիւն ունէր քեռի Լակալը թուշուկների թագաւորութեան մասին: Ինչէ՞ր ասես, որ նա չասէր. նրա կարծիքով աշխարհիս երեսին այնպիսի թուշուկներ կան, որ միայն ապրում են օդով, իսկ մի քանի թուշուկներ էլ ամենեւին ձուաներ չեն ածում: Բայց Կաղլիկը, որ կէս տարուայ ընթացքում արդէն ուսումնասիրել էր թուշուկների վարքը, բարքը ու նրանց բոլոր կեանքը, չէր կարողանում համոզել իր քեռուն, որ նրա բոլոր պատմածը դարդակ բաներ են: Բայց միևնոյն ժամանակ քեռին էլ իր ազգականի վրայ էր ծիծաղում: Ընթրիքից լետոյ նրանք դուրս եկան ծովի ափը զբօսնելու. Կաղլիկը լանկարծ պարզեց ձեռքերը, վազեց գէպի ծովը և բարձրաձայն սկսեց կանչել. «Պալիս եմ, գալիս»: Լակալը մնացապշած: Մի քանի րոպէից լետոյ երեխան հեւալով կրկին վերադարձաւ քեռու մօտ և նրա առաջ խոստովանեց, որ իբր թէ ծովի քաջքերը, որ մի քանի անգամ փրկել են նրան մահից, կանչում էին նրան բարձրաձայն, և նա վազեց նրանց մօտ հարցնելու, թէ արդեօք ինչ վտանգ է նրան այժմ սպառնում:

Լակալը գլուխը շարժեց և հետաքրքրութեամբ նայեց երեխայի վրայ, կարծելով թէ նա խելագարուել է:

—Մի՞թէ դու չըլտեցիր թուշուկների ձայնը, — հարցրեց ծերունին. — այդ գիշերային թուշուկներ էին, որոնք գիշերով են միշտ չոււմ. այդ այնպիսի թուշուկներ էին, որ ցերեկով շատ հազիւ են պատահում, բացի դրանից դրանք գնդակից էլ արագ են թուշում, այնպէս որ աչքի չեն երևում: Իսկ դու դրանց ձայնը քաջքերի ձայնի տեղ ընդունեցիր. լաւ է:

—Ո՛չ, ո՛չ. ես ոչ թէ թուշուկների ձայն լսեցի, այլ իմ բարի քաջքերի ձայները: Նրանք ինձ շատ անգամ են փրկել վտանգից և ես հաւատում եմ նրանց:

Լակալի ջանքերը զուր անցան, նա չըկարողացաւ ոչ մի կերպ համոզել Կաղլիկին:

Այդտեղից Կաղլիկը, հարց ու փորձ անելով թէ՛ որտեղ է գտնուում նրանց հովիտը, վերջապէս եկաւ իր հայրական տունը:

Մայրը ուրախութիւնից քիչ էր մնում մեռնէր, երբ տեսաւ Կաղլիկին այդպէս առողջ, զուգուած ու գեղեցիկ: Հայրը, եղբայրները, քոյրերն իրանց ամուսինների հետ, բոլորն էլ իսկոյն շրջապատեցին նրան. բոլորի՛ ուրախութեան չափ չը կար:

Ուրախութիւնից նրա համար խնջուք սարքեցին և հրաւիրեցին բոլոր բարեկամներին տեսնելու իրանց սիրելի ծովային ճանապարհորդին: Ոչ ոքի մտքովն էլ չէր անցնիլ, որ Կաղլիկըն ամբողջ վեց ամիս, միայնակ ապրում է եղել հայրական տնից մի քանի մղոն հեռու, թռչունների մօտ: Հայրը նրան մի փոքր հաշտեց, որ ինքնակամ հեռացել է տնից և իբր թէ ի միջի ալլոց նկատեց.

— Հը՞, էլի եկել ես մուքթա հաց խոբելու, հա՛:

Փոխանակ պատասխանի՝ երեսան տուեց իր ծնողներին մի քսակ փող և խնդրեց լնդունել այդ իր ճակատի քրքտինքի պտուղը:

— Գալ տարի, հայրիկ, յոյս ունեմ գրանից երկու անգամ աւելի բերել. — ասաց Կաղլիկը:

Ամբողջ ընտանիքը, տեսնելով փալլուն ոսկիները, ապշած մնաց: Այդ կողմի գիւղացիներից գեռ ոչ ոք մինչև այժմ այդպիսի կարճ ժամանակամիջոցում այդքան փող չէր վաստակել:

Կաղլիկը բացարձակ կերպով յայտնեց, որ այդ փողերը թռչունների փետրով է աշխատել, բայց վախեցաւ յայտնելու իր փախստատեղի մասին, որ մի գուցէ մայրն արգելի նրան ապրել այդպիսի վտանգաւոր ժայռի վրայ: Նա ասաց իր ծնողներին, որ իբր թէ նա գնացել էր Շօտլանդիա, ուր նրանց կարծիքով, սև ձկնկուլներ են միայն լինում: Հայրը չը վերցրեց այդ փողերն իր համար, այլ առաջարկեց նրանով մի կտոր հող գնել որդու անունով. բայց Կաղլիկը սկսեց

խնդրել հօրը, որ վերադարձնի նրան այդ փողերը նոր ճանապարհորդութիւններ անելու համար:

— Չէ, ախպէր, — հակառակեց հայրը. — այդ փողերը թող ինձ մօտ մնան առժամանակ, թէ չէ դու գեռ ջահէլ ես, բոլորը կը փչացնես: Ա՛յ, այդ շատ հաւանեցի, որ քո քրտնքի առաջին պտուղը տուեցիր հօրդ, բայց եթէ վերցնես ու բոլորը մխսես ծրտի-պրտի բաների վրայ — այդ ես չեմ թողնիլ:

Ի՛նչ արած, երեսան ակամայ հնազանդուեց հօրը: Երբ ամենքը գնացին քնելու, Կաղլիկը մեծ բաւականութեամբ իր ոտները ձգեց մաքուր ու փափուկ անկողնում, տաք սենեակի մէջ: Ինչպէս ձեզ յայտնի է, նա ամբողջ վեց ամիս չոր խոտերի քարերի վրայ էր քնել, իսկ վերջին ժամանակներում ամբողջ երկու շաբաթ եղանակը շատ վատացաւ, այնպէս որ գիշերները ժայռի վրայ շատ ցուրտ էր լինում: Երկար պաս պահելուց յետոյ երեսային շատ դիւր էր գալիս տանու հացը, մօր ձեռքով պտորաստած տաք կերակուրը, մածուկը, կաթը և տեսակ տեսակ կանաչիները:

V



աշարունակ մի քանի օր հանգստացաւ և ոչ մի գործով չէր զբաղւում, բայց յետոյ սկսեց տխրել ու կարօտել ծովին, իր թռչուններին և իր առաջուայ անկախ կեանքին: Բայց դէպքը ազատեց նրան: Մի անգամ, Գիւլի փողոցներում զբօսնելու ժամանակ, Կաղլիկը նկատեց մի ծովային արծուի խրտուիլակ, որ դրուած էր գեղատան լուսամտում. գեղավաճառը շատ թռչնասէր մարդ էր: Երեսան մտնելով գեղատուն, համեստութեամբ նկատեց, որ արծուին տուած դիրքը ճիշտ չէ: Երկար խօսակցութիւնից յետոյ ծերունի գեղավաճառը չափից դուրս ուրախացաւ, որ հանդիպեց այդպիսի մի մասնագետի: Արծուի խրտուիլակը ամրացրած էր զսպանակի վրայ և Կաղլիկը նոր այն բնական դիրքը տուեց, որ ինքը նկատել էր կենդանի արծիւների վրայ:

— Արի ինձ մօտ աշակերտ, — բացազանչեց ծերունին զմայլուած, ես քեզ կըսովորացնեմ խրտուիլակ պատրաստե-

լը, իսկ յետոյ կընդհատուի մեր միակ բարօնին, որը թռչնաբանական թանգարան ունի: Նա շատ կարելի է քեզ ընդունի իր մօտ: Դու կուսումնասիրես բնագիտութիւնը և ժամանակով կառավարչի պաշտօն կըստանաս ամբողջ թանգարանում:



Այդպէս էլ վճռուեցաւ: Կաղլիկի ծնողները, մանաւանդ նրա մայրը, հոգով ուրախացաւ այդ դէպքի համար: Առհասարակ ամենքը գոհ էին այդ բանից:

— Նա այլ ևս չի գնալ ծովը, — մտածում էր մայրը:

— Նա այստեղ մարդ կըդառնայ բարօնի հովանաւորութեան տակ, — ասում էր հայրը:

— Նա մի գանձ է, գանձ, ոչ թէ աշակերտ, — պնդում էր գեղավաճառը, երբ Կաղլիկը մի քանի շաբաթից յետոյ արդէն սովորեց մեծ հմտութեամբ մաշկել թռչուններին, հանել նրանց կաշին առանց վնասելու փետուրներին ու ոսկորներին, և գեղեցիկ ու բնական դիրքով խրտուիլակներ պատրաստել: Նա այն առաւելութիւնն ունէր, որ անասելի ճշտութեամբ կարողանում էր իւրաքանչիւր թռչունի տալ իր բնաւորութեան համեմատ գիրքը և արտայայտութիւնը:

Պէտք է ասած որ գեղավաճառը աւելի էր գերադասում կենդանի թռչուններին, այդ պատճառով էլ նա զանազան տեսակ թռչունների ամբողջ ժողովածու էր պահում իր տանը. նա միշտ նրանցից խրտուիլակներ էր պատրաստում և ներկայացնում բարօնին, որից, ի հարկէ, փող ստանալիս կըլինէր: Երբ Կաղլիկը մի խումբ գեղեցիկ խրտուիլակներ պատրաստեց, գեղավաճառը տարաւ ամբողջ: Բարօնը մինչի այն աստիճան գոհ մնաց, որ պահանջեց իսկոյն ներկայացնել իրան այդ հմուտ արհեստագէտին:

Եւ ահա մեր գեղացի երեխան, նոր շորեր հագած, գեղավաճառի հետ միասին եկան ամբողջ:

Նրան թույլատրեցին զննել թանգարանի բոլոր պահարանները և առանց քաշուելու, անել իր նկատողութիւնները: Բարօնը հիացաւ Կաղլիկի գործնական գիտութիւնից և յայտնեց, որ ընդունում է նրան իր մօտ և խոստանում է, բացի նրա բոլոր պիտոյքներից, մի որոշ գումար ռոճիկ էլ տալու ու նրան յանձնելու թանգարանը:

Բայց Կաղլիկը միանգամից չէր կարողանում համաձայնուել այդ առաջարկութեան, որովհետեւ նա բոլորովին ընտելացել էր ազատ կեանքին. նա յայտնեց բարօնին, որ իր անգրագիտութեան պատճառով չի կարող մի այդպիսի պաշտօն յանձն առնել թանգարանում, իսկ երբ կը սովորի կարգալ ու գրել, այն ժամանակ նա կ'ընդունի այդ առաջարկութիւնը:

Բարօնը իսկոյն հեռացրեց այդ արգելքը, ասելով որ նրա ծեր սպասաւոր Լաֆլէօրը շատ լաւ գիտէ կարգալ ու գրելը և նա ուրախութեամբ յանձն կառնի ձրիաբար սովորացնելու Կաղլիկին:

Ծերունի սպասաւորը իսկապէս լաւ ձեռք ունէր և այնքան ուղիղ էր գրում ֆրանսերէն, որ թելադրութեամբ կարողանում էր գրել իր տիրոջ բոլոր գիտնական թղթերը:

Բայց Լաֆլէօր սպասաւորը ուրախութեամբ չ'ընդունեց Կաղլիկին, այլ ընդհակառակը շատ նեղացաւ իր մտքում, որովհետեւ վախենում էր, որ մի գուցէ ժամանակով իր աշակերտը դառնայ իր հակառակորդը, այդ պատճառով էլ շատ էր ճնշում նրան: Բայց և այնպէս մի տարուց յետոյ աշակերտը անցկացաւ իր ուսուցչից: Բացի դրանից Կաղլիկին աջողուեցաւ այնտեղի քահանայից մի փոքր լատիներէն էլ սովորել, այնպէս որ նա կարող էր գոնէ հասկանալ թռչունների գիտնական անունները: Երբ լրացաւ Կաղլիկի 16 տարին, նա լաւ ծանօթացաւ արդէն թռչնաբանութեան հետ, և կրկին սկսեց կարօտել իր առաջուայ ազատ կեանքին և բնութեան, ուր ամեն մի քայլափոխում կարող էր գտնել ուսումնասիրութեան գանազան հարուստ պաշարներ: Ամբողջ փակ կեանքը նրան անտանելի դարձաւ: Նա տան ամենավերին յարկում մի առանձին, մաքուր սե-

նեակ ունէր, որի լուսամուտներէց երևում էին շատ հեռուում «Սև և սպիտակ կովերը», ծովը և ժայռերը: Այդ տեսարանը ամեն ընկալի նորոգում էր նրա սրտի վէրքը: Նա զգուհի էր մարդկանցից: Նա կարօտ սրտով փափագում էր տեսնել իր թուշուկներին և քարանձաւը:

«Հիմա ո՞վ գիտէ, թէ քնչ են անում իմ կտցարները», ասում էր նա շուտ շուտ ինքն իրան, թողնելով գործը և մըտայոյց կերպով նայելով դէպի հեռուն: Նա ակամայ լիշեց, թէ ինչպէս գեղեցիկ կերպով նմանեցնում էին նրանք իրանց ձայնը ալի մկրկոցին և շան հաջոցին: Ինչպէս գոռում էր ճայրեզան պէս, ինչպէս ծաղրում էին կայտառ եղտիւրիկները դերձակի ձայնին, կանչելով՝ «գիւղիւիտ»:

Ինչպէս նա ծովի քաջքերի տեղ էր ընդունում մի քանի թուշուկներին:

Այո, այդ բոլորը լիշեց Կաղլիկը, որը վաղուց արդէն այլ ևս չէր հաւատում իր աներեւոյթ պաշտպանների խորհրդաւոր ձայներին. մանաւանդ ժայռի վրայ իր անց կացրած անձնական և ազատ կեանքի լիշողութիւնները նրա համար շատ թանգ էին, այնպէս որ խեղճը չէր իմանում, թէ ո՞ւր գնար տաղտկութիւնից: Նրան շրջապատող մարդիկը նկատում էին, թէ ինչպէս նա օր օրի վրայ հալումաշ էր լինում. բարօնը Կաղլիկին տեսնելիս սաստիկ անհանգիստ էր լինում և մի օր սկսեց հարց ու փորձ անել նրան, թէ ինչիցն է արդեօք անբաւական և ինչո՞ւ է նա այդպէս տխուր և լուռ ու մունջ:

— Ոչ, պարոն, ես շատ գոհ եմ ձեզանից, — պատասխանեց դեռահաս գիւղացին, — միայն ես աղատութիւն եմ ուզում. ի սէր Աստուծոյ, թոյլատրեցէք ինձ, որ գնամ՝ թափառեմ արար աշխարհում. ես ձեզ խօսք եմ տալիս, ինչոր հետաքրքիր բան ժողովեմ, բոլորն էլ կը հասցնեմ ձեր թանգարանին:

Բայց բարօնը սաստիկ նեղացաւ. նա սկսեց յանդիմանել Կաղլիկի երախտամոռութիւնը և առաջարկեց նրան փոխելու վարձատրութեան պայմանները:

— Սրանից յետոյ ռոճիկդ հաւասար կլինի Լաֆլէօրի ռոճիկին, — ասում էր ծերունին. — քեզ համար նոր շորեր

կարել կըտամ, այլ ևս ծառայի նշանազգեստ չես հագնիլ, կըճաշես ոչ թէ սպասաւորների սենեակում, այլ իմ սեղանատանը: Սրանից աւելի էլ քնչ ես ուզում: Այդ լաւ չէ, որ չարութեամբ ես հատուցանում ինձ իմ արած բարութեան փոխարէն: Լաւ մտածիր, ո՞վ կարող է քեզ փոխարինել, որ մեզ թողնում ես ու ինքդ հեռանում... Ձէ, որդի, խելօք կ'աց:

Կաղլիկը հազիւ հազ զսպեց իր արտասուքը: Նա խըղճահարուեցաւ բարօնին, բայց այնուամենայնիւ սովորութեան ոյժը իրանն արեց:

Երեք տարի շարունակ փակուած կեանք վարելով, պարպելով մտաւոր աշխատութեամբ և ամբողջ օրը չրկարողանալով գոնէ մի ժամ զբօսնել ամրոցի շրջակայքում, նա այդպիսով խանգարեց իր առողջութիւնը. նա զգում էր որ անպատճառ կը մեռնի, եթէ երկար տեւի իր այդ կեանքը: Աղատութիւնն էր նրա միակ դարմանը: Երկար նա մաքառելով ինքն իրան հետ, վերջապէս աղաչեց բարօնին, որ գոնէ մի շաբաթ նրան արձակուրդ տայ, երբուհեւ կրկին վերադառնալ ամրոցը և առաջուայ պէս կեանք վարել այնտեղ: Բարօնը չափազանց ուրախացաւ, տուեց նրան փող, մի հեռագիտակ, խրտուիլուկ սլատրաստելու զանազան տեսակ գործիքներ և ութն օր ժամանակով արձակուրդ:

Եւ ահա մի գեղեցիկ ու պայծառ առաւօտ Կաղլիկը, այցելելով իր ծնողներին, ճանապարհ ընկաւ դէպի իր սիրելի պատնէշների մօտ. նա ձգեց իր վրայից պարոնական շորերը, հագաւ գիւղացու հագուստ, պարկն առաւ ուսը և վերցնելով իր ձեռնափայտը, հեռացաւ: Լուր էր տարածուել, որ իբր թէ «սև և սպիտակ կովեր» կոչուած ժայռը տեղ տեղ փուլ է եկել, բայց որովհետեւ Կաղլիկի լուսամտից ոչ մի փոփոխութիւն չէր երևում ժայռի վրայ, այդ պատճառով էլ նա չէր հաւատում այդ լուրերին:

IV



այց որքան մօտենում էր առաջուայ բնակավայրին, Կաղլիկն այնքան աւելի էր համոզւում, որ ծովը չի խնայել այդ տեղերին. ժայռի վրայ շատացել էին զառիվայր տեղերը և նրա փեշերը լի էին ատամի նման դուրս ցցուած տեղե-

րով. այնտեղ, ուր առաջ վայրենի ծաղիկներ էին բսնում, այժմ պատած էր տղմով ու ճահիճներով. իսկ ճահճոտ տեղերում ընդհակառակը գետինը չորացել էր ու խոտ էր բուսել. ծանօթ շաւիղներն ու ճանապարհներն անյայտացել էին: Մեծ դժուարութեամբ նա հասաւ իր քարայրը և մնացսարսափած: Թռչունների աղբի կոյտերը և փտած խոտերը բոլորովին ապականել էին ներսի օդը: Կաղլիկը իսկոյն հանեց պարկից կացինը, մի փոքր ցախ ու տերեւներ բերեց և խարոյկ պատրաստեց, որի մէջ հոտի համար ձգեց մի քանի հատ գիհու և պտուղներ: Քիչ ժամանակ չըկորցրեց նա իր բնակարանը մաքրելու համար. բայց դրա փոխանակ ինչպիսի ախորժակով նա վայելեց տնից բերած ուտելիքը, ինչ բաւականութեամբ նա ձգուեց իր խոտէ անկողնում, որ գլուխում էր քարանձաւի նոյն իսկ մուտքի առաջ, որտեղից նա սկսեց ծծել ծովի մաքուր օդը և հիանալ իր աւերմունքից ազատ մնացած ծաղկանոցի վրայ. վայրի ծաղիկներն արդէն ժպտում էին գարնանային արեգակի տակ: Երեխային շատ ախորժելի թուեցաւ իր թագաւորութեան մէջ քնելը և միւս առաւօտեան՝ չընայելով որ նախորդ օրը սաստիկ լոգնել էր, նա ախորժակով նախաճաշեց, լողացաւ ծովի ջրում և գնաց վերահասու լինելու իր կալուածներին: Նա սարսափած մնաց, երբ տեսաւ որ ժայռը շատ տեղերում ճաքճքուել էր ու մեծ մեծ ձեղքեր էին կազմուել նրա վրայ, որոնց մէջ, ինչպէս երևում էր, պատսպարւում էին թռչունները վատ եղանակներին, որովհետեւ բների ձուաները դեռ տաք էին, իսկ գետինը պատած էր փետուրներով:

Վաղուց է որ Կաղլիկը իրան այսպէս բախտաւոր չէր զգացել, ինչպէս այդ առաւօտ. միայնակ, ազատ և լիակատար տէր իր արածներին: Բնութիւնն էլ կարծես, ուզեց երես տալ իր բարեկամին, և երեկոյեան հիւրասիրեց նրան հիանալի տեսարանով, երբ արեւը մայր էր մտնում դէպի ծովի հեռուն: Կաղլիկը այլ ևս առաջուայ տգէտ, սնահաւատ ու նախապաշարուած գիւղացին չէր: Ուսումը կրթել էր նրա ճաշակը, նրան բացատրել էր բնութեան բոլոր երևոյթները: Նա այժմ կրկնապատիկ բաւականութիւն էր ստանում այն

բաներից, ինչ որ անբացատրելի կերպով դիւր էր գալիս նրան մանուկ հասակում: Գիշերը յանկարծ ծովը փայտալեց, երկինքը ծածկուեց մռայլ ամպերով, բարձրացաւ փոթորիկ և յետոյ սկսեց անձրեւ գալ: Լուսինը երբեմն ամպերի տակից հանում էր իր գլուխը և պատնէշների ու ժայռերի վրայ մի ինչ որ տարօրինակ լոյս գցում ու կրկին անհետանում: Բայց Կաղլիկը քաղցր քնած էր, երբեմն նա որոտի ձայնից զարթնում էր ու կրկին խորասուզւում քնի մէջ: Բայց յանկարծ մի այնպիսի դղրդոց բարձրացաւ, որ երեսան իսկոյնսարսափած վեր թռաւ իր տեղից ու ոտքի կանգնեց. նրան այնպէս էր թւում թէ ժայռը տատանւում է: Նա վերեւից լսեց թռչունների ողորմելի և հազարաւոր ձայներ. անցաւ մի րոպէ — իսկոյն այս-այն կողմից թափթփուեցան նրա վրայ բազմաթիւ թռչուններ, որոնք սարսափած մտել էին քարանձաւը փրկութիւն գտնելու իրանց հարեանի մօտ: Իսկ տւելի դեռահաս թռչունները ուղղակի խումբ խումբ խոնքւում էին նրա ոտքերի տակ: Կաղլիկը նրանց հանգստացնելու յետոյ, տեսաւ որ թռչունները բոլորն էլ շարուեցին իրա շուրջը. բայց քունը նրան յաղթեց և կրկին նա ձգուեց իր անկողնում: Միւս առաւօտեան նա բոլորովին ապշած մնաց, երբ տեսաւ որ աւելի ուժեղ և հասակաւոր թռչունները վաղ առաւօտուանից արդէն դուրս էին թռել, իսկ իր մօտ մնացել էին միայն սատակածներն ու վիրաւորուածները: Կաղլիկը, որ այժմ լաւ ծանօթ էր բնագիտութեան և թռչունների մարմնի կազմութեան հետ, իսկոյն և եթէ բժշկի դեր կատարեց. նա իր քարանձաւում մի կատարեալ հիւանդանոց շինեց. բոլոր սատակած թռչուններին նա ձգեց ծովը և սկսեց հոգ տանել վիրաւորուածների վրայ: Նա ունելով իր հետ վերցրած խրտուիլակ պատրաստելու բոլոր գործիքները, սկսեց օգնել հիւանդ ձկնկուլներին, որոնք բնազդամբ զգում էին նրա արած օգնութիւնը:

Գիշերուայ փոթորիկը սարսափելի վնասներ տուեց ժայռին, նա շատ տեղից նորից ճաքճքեց և կտոր-կտոր թափթփուեց մի քանի տեղից: Այդ պատճառով էլ եղաւ իրկները, ծովային ծիծեռնակները, ձկնկուլները և կոյսարներն ա-

Հազիւ երամներով պտտուում էին ամբողջ օրը ժայռի շուրջը, ողորմելի ձայներ հանելով, որ կարծես վերջին հրաժեշտ էին տալիս իրանց օթեանին, իսկ իրիկնադէմին բոլոր թռչունները խմբովին հեռացան ժայռից. այդ հանգամանքը Կաղլիկին աւելի համոզեցրին նրա բնականի խախուտ լինելը:

Կաղլիկը մնաց մենակ իր հիւանդ թռչունների հետ. նա ամբողջ մի շաբաթ առանձին ուշադրութեամբ հոգ էր տանում նրանց վրայ, առաւօտները վազում էր Օբերվիլ գիւղը հաց գնելու ու իր թռչունների համար հատիկներ բերելու: Իսկ սրանք այնպէս ընտելացան իրանց բժշկին, որ նրա ձեռքից ուղղակի հատիկներ էին առնում և նրանից մինչև անգամ մի ոտ հեռու չէին գնում: Առողջացող թռչունները վատ էին պահում իրանց—նրանք կուռում էին միմեանց հետ և նեղացնում էին իրանց այն ընկերներին, որոնք իրանց կոտրած թւերի ու ոտների պատճառով չէին կարողանում թռչել, այլ միայն հազիւ հազ քալում էին քարանձաւի մօտ:

Եղանակը քանի գնում էր, այնքան վատանում էր. շուտ - շուտ անձրև էր գալիս. գետնի ցեխը, հետզհետէ նօսրանալով, սկսեց հոսել ժայռի փեշերի վրայով, իր տակով անելով ծաղիկ, խոտ ու թփեր: Զեղքուածքները օր-օրի վրայ մեծանում էին: Կաղլիկը շատ երկիւղ էր կրում և փրկութեան տեղ էր ուզում որոնել:

Նա մտածեց տանել բոլոր թռչուններին Դիվի գիւղի քահանայի մօտ, որը, ինչպէս նա լսել էր, բնագետ էր միայն հոգեպէս, ոչ թէ թանգարանի խրտուիլակներ հաւաքող: Իր մեծացրած թռչուններին սպանելը երեխան քրիստոնէութեան հակառակ համարեց: Նա առաջ մի կողով հիւսեց եղեգնից, որ նրա մէջ տեղաւորի իր սանիկներին. բայց յետոյ աւելի յարմար գտաւ մի էշ էլ գնել դրա համար. այդ միւսնոյն օրը նա վագեց Օբերվիլ, մի փոքրիկ էշ գնեց և բերեց իր ժայռի մօտ:



Իշերը շատ փոթորկալից էր, տիղմի ահագին հոսանքները քարուքանդ էին արել Կաղլիկի քարանձաւի շուրջը, փրկուելու ժամանակն էր:

Երեխան առաւօտեան վաղ վերկացաւ, կերակրեց էշին և թռչուններին, փափուկ խոտ ածած կողովը կապեց էշի մէջքին, զգուշութեամբ դրեց իր սանիկներին նրա մէջ և քշեց էշին դէպի ծովի կողմը: Նա դիտմամբ տեղատուութեան ժամանակ ճանապարհ ընկաւ, որ ծովի կողքով, կարճ ճանապարհով, շուտով հասնի Դիվի: Բայց հակառակի պէս էշը, լսելով ալիքների վշշոցը, ականջները ծռեց դէպի յետ և վախից տնկուեցաւ իր տեղում—այլ ևս առաջ չէր գնում: Նրա ամբողջ մարմինը սրսուում էր երկիւղից: Բայց Կաղլիկը չէր ստիպում էշին առաջ գնալու, նա ընդհակառակը կանգ առաւ և սկսեց շուրջ կամակոր կենդանու պարանոցը, նրան սիրտ տալով քաղցրութեամբ:

Յանկարծ ծովի մօտից լսուեցան մարդու ողբալից ձայներ: Որովհետեւ դեռ օրը լաւ չէր լուսացել, այդ պատճառով էլ Կաղլիկը լաւ չէր կարողանում որոշել, թէ ո՞րտեղ են աղաղակում, բայց նա իսկոյն հասկացաւ, որ մարդ է խեղդւում: Շուրքը հանելը նրա համար մի րոպէական բան էր. նա իսկոյն հանեց շորերը, դրեց կողովի վրայ և վագեց պատնէշների կողմը, որտեղից լսում էր խեղդուողի ձայնը: «Սե կովերից» մի քանի քալ հեռու, որտեղ ջուրը համարեա ծածկել էր բոլոր գետինը, ալիքների հետ մի ինչոր ալլանդակ բան էր մաքառում. հեռուից երևում էին միայն նրա ահագին գլուխը և երկար ձեռները, որ անդադար աշխատում էին բռնել ժայռերից ու փրկութիւն գտնել:

Կաղլիկը նետուեցաւ ծովի մէջ և համարձակ կերպով սկսեց առաջ լողալ դէպի անձանօթ հրէշը:

—Այստեղ, այստեղ, օգնեցէք.—գոռաց գլուխը ալիքների միջից:

—Վահ, այս խօ դերձակի ձայնն է,—բացագանչեց Կաղ-


լիկը, և իսկոյն լիշեց իր մանկութեան այն ծանր տրպաւորութիւնները, որ թողել էր նրա վրայ չար սապատողը: Զոհեւ իր սեփական կեանքը մի այդպիսի անպիտանի համար: Այդպէս շուտով մեռնել, թէ ինչ է պիտի փրկի նրան, որը անտանելի է եղել... Կաղլիկը մի փոքր տատանուելուց յետոյ, կամեցաւ լողալով լետ դառնալ, բայց վաղուց չըլտած անլալտ ձայները շշնջացին նրա ականջում...

— Պարզիւր թւերդ, սիրելիս, ես այստեղ եմ...

Կաղլիկը կարծես երազի մէջ էր. նա շարժեց իր երկու ձեռները և ջուրը ճղելով, իսկոյն հասաւ պատնէշներին: Խեղդուողը ճիշտ որ դերձակն էր: Նախանձոտ և շահախնդիր սապատողը վաղուց է որ հետամուտ էր լինում երեխային, և համոզուած լինելով որ այն թանգագին փետուրները այդ ժայռի մօտ են գտնուում, նա մտադրուել էր գիշերով գալ այդտեղ և գտնել գանձի տեղը: Բայց խարդախը շշկուել էր—նրա աջ ոտը սալթաքել էր ողորկ քարից, և ընկել էր ուղղակի ծովը:

Երբ Կաղլիկը փրկեց դերձակին կատաղի ալիքների միջից, խեղդուողը արգէն ուշքից գնացել էր: Կաղլիկը ինքն էլ չէր լիշում, թէ ինչպէս էր դուրս եկել ափը և ինչպէս էլ քաշ տուել իր ետևից կիսամեռ սապատողին: Բայց դրանով չըվերջացաւ նրա հերոսութիւնը: Երեխան դերձակին ուշքի բերեց, վազեց ու իր էշը գտաւ. իսկոյն խարոյկ վառեց և սկսեց մերսել սապատողի փետացած անգամները. երբ դերձակը բոլորովին սթափուեց և հանգստացաւ, նա սկսեց շնորհակալութիւն յայտնել Կաղլիկին, նրան իր բարերար անուանելով: Նա խոստովանուեց երեխային, որ շահախնդրութիւնից զրգուած եկել է պատնէշների մօտ, որպէս զի գտնի սև ձկնկուլների տեղը:

— Քո մասին ամբողջ քաղաքում պատմում են, որ իբր թէ դու շատ հարստացել ես և բարօնը ուզում է քեզ իր ժառանգը շինել,—ասաց դերձակը: — Իսկ եթէ այդպէս է, էլ ի՞նչու չըպէտք է օգնես աղքատ մարդուն և ցոյց տաս նրան գանձի տեղը: Ինչքան դու հարստացար, կարծեմ այդ քեզ բաւական է: Գուցէ ես առանց քեզ էլ կարողանայի



գտնել ձկնկուլներին, բայց ինչպէս երևում է, քաջքերը ինձ խանգարեցին. նրանք փչացրել են հացագործի ժամացույցը. դեռ վաղ էր, որ ես դուրս եկայ նրա մօտից. ես կարծում էի թէ կարող եմ հասնել քո ժայռին մինչև մականթացութեան ժամանակ, բայց այսպիսի օյին եկաւ գլուխս... ձըմարիտ, եթէ դու չըլինէիր, անպատճառ բանս բուրդ էր...

Կաղլիկը զգուանքից չէր իմանում, թէ ինչ անի, որ ագահ ու վախկոտ սապատողը հեռանայ իրանից. նա երկու ոսկէ դրամ դնելով դերձակի ձեռքում, առաջարկեց նրան շուտով այնտեղից հեռանալ ուր որ ուզում է, միայն թէ ազատի իրան նրանից:

Բայց սապատողը ձեռք չէր վեր առնում նրանից, և երբ Կաղլիկը էջն անելով իր առաջը, սկսեց շարունակել ճանապարհը և երբ նա ճանապարհին սկսեց զանազան տեսակ խոտեր պոկել դեղերի համար, այն ժամանակ դերձակը լրբութեամբ կպաւ նրա ետից և սկսեց հարց ու փորձ անել, թէ ինչո՞ւ համար է նա պոկում այդ խոտերը, ի՞նչ քան փող է նա վաստակում դրանով, ո՞ւմ վրայ պիտի ծախի, և այլն:

Երեսալի գահլէն տարաւ:

—Եթէ այդպէս սրտով ուզում էք իմանալ, թէ ինչո՞ւ համար եմ հաւաքում այս խոտերը,—ասաց Կաղլիկը— ուրեմն լսեցէք: Այս է իմ բոլոր հարստութիւնը, որ պատրաստ եմ քեզ հետ բաժանել: Ծովային խոտերը շատ հարկաւոր են դեղեր պատրաստելու համար. ամեն օր եկէք այստեղ և հաւաքեցէք. դեղավաճառը միշտ կը գնի ձեզանից այս խոտերը, ինչպէս որ մինչև օրս ինձանից առնում էր: Իսկ ինչ վերաբերում է իմ ձկնկուլներին, այդ մոռացէք բոլորովին: Դուք ուշացել էք:—Այդ րօպէին յետևից լսուեցաւ լանկարծ մի սարսափելի դղրդոց և որոտմունք: Կաղլիկը սկսեց բզել էջին և շտապեցնել իր քայլերը: Սապատողը հազիւ հազ էր կարողանում հետևել նրան:

—Օ՛հ, որոտում է երկինքը, ասաց դերձակը երկչոտ ձայնով.—երևի փոթորիկը Հօնֆլերումն է, չըհասնի մեզ՝ լաւ է:

—Ներեցէք,—վրաբերեց Կաղլիկը—այդ երկինքը չէ որոտում, այլ իմ ժայռն է փլում: Ես այս րօպէիս կորցնում եմ այն՝ ինչ որ թանգ է եղել իմ կեանքում ինձ համար—կորցնում եմ իմ ապաստանը, իմ պարտեզը և իմ սիրելի ձրկնկուլներին: Նայի՛ր յետ, պարոն դերձակ:

Սապատողը շրջուեցաւ դէպի պատնէշները և տեսաւ մի սարսափելի տեսարան—ժայռիցը պոկուել էին մի քանի ահագին բեկորներ և մեծ շառաչումով մէկը միւսի յետևից գլորւում էին դէպի ծովը. «սև և սպիտակ կովերը» փրշուր-փշուր եղան: Այլևս աւելորդ էր մտածել սև ձկնկուլների մասին:

Դերձակը յետ մնաց, իսկ Կաղլիկը ափսոսելով իր անփութարինելի կորուստը, հասաւ գիւղը:

«Ինուլթիւնն գգուող մայր չէ, մտածում էր Կաղլիկը.—նա երբէք չի շեղուել իր օրէնքներից, որ երես տայ իր որդուն՝ մարդուն: Ինձ միայն մի միսթարուլթիւն է մնում, որ նա զրկուածին չի թողնում վնաս կրելու—նա, խլելով մեզանից մի բան, անպատճառ վարձատրում է մեզ մի ուրիշ բանով: Ես համոզուած եմ վաղ թէ ուշ նա ինձ մի ուրիշ անկիւն կը պարգևի, որտեղ ես կարողանամ ապրել նրա հետ միասին»:

Կաղլիկը չըսխալուեցաւ: Նա իր թռչուններին լանձնեց գիւղի քահանային և կրկին զբաղուեց իր գործով բարօնի ամրոցում: Բայց նա երկար չըմնաց այնտեղ, նա բացարձակ կերպով խոստովանուեց իր խնամակալին, որ փակ կեանքը խիստ ծանր է իրա համար և նա ձգտում է կենդանի թռչունների աշխարհին, ո՞չ թէ անշունչ թռչուններին, և աղաչում էր որ բարօնը թոյլ տայ նրան ճանապարհորդելու: Բարօնը, ինչպէս մի ուսումնական, շատ կապուեցաւ իր դեռահաս քարտուղարի հետ. բայց ինչպէս մի առաքինի մարդ, նա ափսոսում էր, որ պիտի զրկուի մի ուսումնաւէր երիտասարդից նորանոր տեղեկութիւններ հաւաքելուց: Եւ այդպէս նա տուեց Կաղլիկին բաւական փող, միայն այն պայմանով, որ նա հարստացնի թարգարանը թռչունների նոր խրտուիլակներով, և արձակեց նրան ասելով՝ «Տէր ընդ քեզ»:

Այս տարուայ ընթացքում երիտասարդ տուրիստը կարողացաւ ճանապարհորդել Անգլիայում, Շոտլանդիայում, Իրլանդիայում և այս վերջինիս կղզիների վրայ: Աւելորդ է լինել, թէ ինչպիսի հիացմամբ նա գննում էր պատահած լեռները, ժայռերն ու անտառները, որոնցով ամեն տեղ թռչունների հետաքրքիր օրինակներ: Հետեւեալ տարին նա այցելեց իր ծնողներին ու բարօնին և կրկին ուղևորուեցաւ դէպի Զուիցերիա, Գերմանիա և Ռուսաստան, որտեղից բարօնը ամեն ամիս հազուադէպ բաներ էր ստանում իր թանգարանի համար: Նրա ամրոցի թռչունների «ժողովածուն» մեծ հռչակ ստացաւ ամբողջ Ֆրանսիայում:

Բարօնը յանկարծ մեռաւ. նրա մահից յետոյ գտան մի կտակի թուղթ, որի համաձայն բարօնի բոլոր ունեցածը պիտի անցնէր Օթ գետի հովտում ապրող գիւղացու կրտսեր որդու՝ Կալլիկի ձեռքը: Հանգուցեալի ազգականները գործ բաց արին անպիտան գիւղացու դէմ, որն իբր թէ իր ձեռքն առնելով բարօնին, ուժով ստիպել է նրան կտակել ամեն ինչ իրան: Ի հարկէ, նրանք գործը տանուլ կըտային, բայց Կալլիկը իր յօժար կամքով առաջարկեց նրանց բոլոր կարողութեան մեծ մասը, իսկ իր համար միայն պահեց ամրոցը, թանգարանը և մի կտոր հող, որ կարողանայ մի կերպ ապրել և ամեն տարի համեստ կերպով ճանապարհորդութիւն անել:

Իր ծնողներին նա բոլորովին ապահովացրեց, իսկ Լակալ քեռուն առաւ իր մօտ՝ ամրոցում ապրելու:

Այդ գիւղացին մեծ օգուտ տուեց գիտութեան: Աշխարհիս բոլոր ծայրերում տեսակցում էին նրա հետ գիտնականները: Համարեա եւրոպական բոլոր գլխաւոր թանգարաններում կարելի է թռչունների օրինակներ գտնել, ուր ուղարկել է մեր դեռահաս բնագէտը:

Լապլանդիայում իր գիտնական հետազոտութիւնների ժամանակ նա վնասեց իր հիւանդ ոտը և սկսեց առաջուայ պէս կաղալ, որ և շատ նեղութիւն էր քաշում զբօսելիս: Նրա առողջութիւնը հետզհետէ վատանում էր. նա տեղափոխուեց իր ամրոցը և մեծ եռանդով սկսեց պարապել նկար-

չութեամբ, որ առաջ ուսումնասիրել էր: Նա իր մահուանից առաջ յաճախ ցանկութիւն էր յայտնում որ գէթ մի անգամ նայի այն ժայռին, ուր նա այնքան գեղեցիկ օրեր էր անցկացրել:

Նրա հաւատարիմ բարեկանները—գեղավաճառը և քահանան, որ շատ ծերացել էին, առաջարկեցին տանել նրան իր ժայռի մօտ, բայց նա չը համաձայնուեց. նա ասաց որ՝ ես ինքս միայնակ կըգնամ և շուտով կըվերադառնամ:

Օրը մթնում էր, բայց ամրոցի տէրը դեռ չէր վերադարձել. նրա ծնողները և բարեկամները շատ անհանգիստ էին լինում: Նրանք վառած ջահերով գնացին ծովի ափը՝ նրան որոնելու. երկար զննեցին դէպի պատնէշները տանող ճանապարհները, բայց մթութեան մէջ ոչինչ չէր երեւում: Միւս օրը առաւօտեան կրկին սկսեցին փնտրել Կալլիկին, բայց նրանց բոլոր ջանքերը ի գուր անցան: Իսկ ծովը ոչ մի դիակ չէր հանել ափը: Բայց ձկնորսի պառաւ կինը հաւատացում էր, որ իբր թէ նա իր սեփական աչքերով լուսաբացին տեսել է, թէ ինչպէս ամրոցից դուրս եկող ճանապարհի վրայ տեսել է դեռ չը տեսնուած ծովային թռչուն, որը թռչելով նրա գլխավերեւից՝ բարօնի ձայնով ասել է բարձրաձայն (Պիւում Կալլիկին «բարօն» էին կանչում ամենքը):

—Մնաք բարեաւ, բարի մարդիկ, միք ցաւիլ իմ վրայ—ես կրկին գտայ իմ թեւերը...



Վ. Ե. Բ.

1652

Handwritten signature

0006282

Handwritten text on the right edge

20 13

ՀՀ Ազգային գրադարան



NL0006282

